12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 185 (4565)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Ռուսական գազը մինչեւ հինգշաբթի չի մտնի Հայաստան

Երեկվանից դադարեցվել է ռուսական գազի մուտքը Հայաստան: Պատճառն այս անգամ էլ «գազատարի վրա անցկացվող աշխատանքներն են», որոնց կարիքն այս անգամ նկատվել է Վրաստանի Մցխեթի շրջանում:

«Հայռուսգազարդից» ավելի վաղ հայտնել են, որ Վրաստանի գազատրանսպորտային ընկերությունը երաշխավորել է, որ Հայաստանի գազամատակարարումը կվերականգնվի մինչեւ առաջիկա հինգշաբթի: Բացի դրանից` «գազամատակարարման դադարեցումը գազասպառման հայկական շուկայում չի հանգեցնի փոփոխությունների», նշել էին «Հայռուսգազարդից»:

Հ. Ա.

# Բացել Թուրքիայի արխիվներն ու ապամոնտաժել Թալեաթին

Մեկ տարի առաջ` հոկտեմբերի 10-ին, Հայաստանում եւ Թուրքիայում շատերը անհամբեր սպասում էին, թե ինչ տեղեկություններ կգան Ցյուրիխից, որտեղ ԱՄՆ, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի արտգործնախարարների ներկայությամբ Հայաստանի եւ Թուրքիայի ԱԳ նախարարները պատրաստվում էին ստորագրել հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման ու զարգացման արձանագրությունները, սակայն գործընթացը ձգձգվում էր:

Այդ արձանագրությունների ստորագրմանը նախորդել էին Հայաստանի եւ Թուրքիայի ղեկավարների, ինչպես նաեւ միջազգային միջնորդների, առաջին հերթին` Շվեյցարիայի եւ Միացյալ Նահանգների երկարատեւ ու դժվարին դիվանագիտական ջանքերը:

Ամեն դեպքում, հենց հոկտեմբերի 10-ին, քիչ ավելի ուշ հայտնի դարձավ, որ Թուրքիան ցանկանում էր նախապայմաններ առաջ քաշել ղարաբաղյան հարցի առնչությամբ, ինչի առիթը նրան չտրվեց Ցյուրիխում: Այդ նախապայմանները կամաց-կամաց շարադրվեցին հետագա տարբեր առիթներով թուրքական ղեկավարության ելույթներում:

Արձանագրությունների ստորագրումից մեկ տարի անց զեկույց է հրապարակել ամերիկյան Քարնեգի հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ Թոմաս դե Վաալը` դրանում հայ-թուրքական արձանագրությունները համարելով Հարավային Կովկասում վերջին տարիների ամենադրական նախաձեռնությունը: «Այս արձանագրությունները պետք է կենդանի պահվեն, քանի որ գործընթացը դեռ հնարավորություն ունի տարածաշրջանում փոփոխություններ բերելու, իր զեկույցում նշել է դե Վաալը` հավելելով, որ գործընթացը կարող է վերականգնվել 2011 թվականի ամռանը Թուրքիայում կայանալիք ընտրություններից հետո: «Ահա թե ինչու է կարեւոր, որ կողմերը գործընթացը մինչ այդ կենդանի պահելու ջանքեր գործադրեն»:

Դե Վաալի ներկայացմամբ, գործընթացում բոլոր կողմերի ներգրավվածության պարագայում 2015-ը` որպես Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելից, կարող է լինել այնպիսի մի սահմանաժամկետ, մինչեւ երբ կարելի է աշխատել հայ-թուրքական գործընթացի բարելավման ուղղությամբ:

Փորձագետը որոշ տարբերակներ է առաջարկում, որոնք կարող են օգտագործվել կենդանի պահելու հայ-թուրքական գործընթացն անգամ փակ սահմանների դեպքում: Մասնավորապես, դե Վաալը թուրքական կողմին առաջարկում է ավելի զուսպ լինել` չփորձելով միջնորդական առաքելության դերակատարություն ստանձնել ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցություններում: Մյուս կողմից, ըստ Վաալի Հայաստանը կարող է վերականգնել իր տարածքով հաղորդակցությունը Նախիջեւանի եւ Ադրբեջանի միջեւ, էլեկտրաէներգիա մատակարարել Թուրքիայի սահմանամերձ շրջաններ: Թուրքիան էլ, իր հերթին, կարող է ազատ մուտք ապահովել հայկական պատմական շրջաններ, օրինակ` Անի: Իսկ մինչ այդ Թուրքիան, ըստ փորձագետի, հարկ է, որ բացի իր արխիվներն ու ապամոնտաժի Թալեաթի հուշարձանը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

# Կաթողիկոսն ընդունել է Դեր Զորի նահանգապետին

**Ամենայն հայոց կաթողիկոսը** երեկ ընդունել է Դեր Զորի նահանգապետ **Հուսեյն Առնուսին**: Ըստ Մայր աթոռի տեղեկատվական համակարգի` Նորին սրբությունը, ողջունելով նահանգապետի այցը Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, վերհիշել է 2001 թ. իր այցը Դեր Զոր: Անդրադառնալով հայ եւ արաբ ժողովուրդների բարեկամությանը` Վեհափառ հայրապետը շնորհակալական զգացումով նշել է Սիրիայի ժողովրդի ու իշխանությունների հոգատար վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ:

Գարեգին Երկրորդը երախտագիտությամբ ընդգծել է նաեւ, որ 1915 թ. Մեծ եղեռնի տարիներին ցեղասպանությունից մազապուրծ շատ հայորդիներ իրենց ապաստանն են գտել արաբ ժողովրդի մոտ: «Թող Աստված երկնքից խաղաղություն իջեցնի ձեր աստվածասեր ժողովրդի վրա, խաղաղություն, որը խարսխված է արդարության վրա: Մենք միշտ կհիշենք մեր հանդիպումները, որոնք ոչ միայն ուրախության, այլեւ երախտագիտության զգացում են առաջացնում մեր մեջ հանդեպ Սիրիո ժողովրդի: Եկեղեցու օրհնությունը հովանի լինի ձեզ վրա եւ շնորհազարդի բարի գործերի համար: Այդ օրհնությունն անկասկած պիտի ավելի պտղաբերի եւ արդյունավորի ձեր ընթացքը», իր խոսքում նշել է Վեհափառ հայրապետը:

Նորին սրբությունն իր ողջույններն ու բարեմաղթանքներն է փոխանցել նաեւ Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադին: Նահանգապետ Առնուսն իր հերթին շնորհակալություն է հայտնել ընդունելության համար:

Հ. Ա.

# ԱԺ նախագահը մեկնում է Հունաստան եւ Կիպրոս

Այսօր Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով մեկնում է Հունաստանի Հանրապետություն: Աթենքում ԱԺ նախագահը հանդիպումներ կունենա Հունաստանի նախագահ Կարոլոս Պապուլիասի, խորհրդարանի նախագահ Ֆիլիպոս Պետսալնիկոսի, ԵԱՀԿ ԽՎ նախագահ Պետրոս Էֆթիմիուի, խորհրդարանական եւ միջխորհրդարանական կառույցների, նրանց ղեկավարների հետ: Հոկտեմբերի 14-ին պատվիրակությունը կմեկնի Կիպրոս, որտեղ ԱԺ նախագահը կհանդիպի Կիպրոսի Հանրապետության նախագահ Դիմիտրիս Խրիստոֆիասի, Ներկայացուցիչների պալատի նախագահ Մարիոս Կարոյանի, Նիկոսիայի քաղաքապետի, Կիպրոսի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Մ. Խ.

# Իրանի խորհրդարանի նախագահը Հայաստանում է

Ինչպես նշել էինք, հոկտեմբերի 8-ին երկօրյա աշխատանքային այցով Երեւան է ժամանել Իրանի խորհրդարանի նախագահ **Ալի Լարիջանիի** գլխավորած պատվիրակությունը: Երեկ Ազգային ժողովում Հովիկ Աբրահամյանն ընդունել է իրանցի գործընկերոջը: Կայացած առանձնազրույցի ընթացքում կարեւորվել են երկկողմ բարեկամական հարաբերությունները, միջխորհրդարանական հարաբերությունների զարգացումը: Զրույցի ընթացքում անդրադարձ է արվել նաեւ տարածաշրջանային հարցերին:

Առանձնազրույցից հետո հայ-իրանական հանդիպումը շարունակվել է ընդլայնված կազմով:

# Իրանի պաշտպանության նախարարը` Բաքվում

Ադրբեջանական «Թրենդ»-ի փոխանցմամբ` երեկ Բաքու է ժամանել Իրանի պաշտպանության նախարար Ահմադ Վահիդին: Աղբյուրի համաձայն` «այցի ընթացքում կքննարկվեն հարցեր Ադրբեջանի ու Իրանի ռազմական եւ անվտանգության հարցերում համագործակցության վերաբերյալ»:

Հիշեցնենք` Իրանի նկատմամբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի սահմանած պատժամիջոցներից հետո շատ երկրներ, այդ թվում` Ռուսաստանը, հետաձգել են իրենց համատեղ ծրագրերը Թեհրանի հետ:

Հ. Ա.

# «Երեւանը մենք ենք»

## Նշվեց Երեւանի հիմնադրման 2792-ամյակը

**Էրեբունի-Երեւանի հիմնադրման 2792-ամյակին նվիրված տոնակատարությունը կիրակի առավոտ մեկնարկեց «Էրեբունի» պատմական արգելոց-թանգարանում` ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի, Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի մասնակցությամբ: Թատերական ներկայացումը պատմում էր Ուրարտական թագավորության ժամանակաշրջանի, Արգիշտի թագավորի կյանքի ու Էրեբունու հիմնադրման պատմության մասին:**

**Ելույթի խոսքում Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը կարեւորեց Երեւանի ծննդյան տարեդարձը միասին տոնելու անհրաժեշտությունը: «Որպեսզի տոնը մեր մեջ նոր լիցքեր առաջացնի Երեւանը շենացնելու եւ զարգացնելու համար», ասաց Գագիկ Բեգլարյանը շնորհավորելով երեւանցիներին եւ համայն հայությանը մայրաքաղաքի 2792-ամյակի կապակցությամբ:**

**Այնուհետեւ Արգիշտի թագավորի գլխավորած զորախումբը փայլերթով շարժվեց Երեւանի քաղաքապետարան, Հանրապետության հրապարակ` ազդարարելու Երեւանի տոնի մեկնարկը:**

**Կիրակնօրյա Երեւանը վերածվել էր բացօթյա տոնական հսկայական հրապարակի:**



**«Երեւանը մենք ենք» խորագրով բազմազան միջոցառումները նախատեսված էին յուրաքանչյուր տարիքի եւ նախասիրության երեւանցու համար: Ջազային, ռոք, դասական, էստրադային երաժշտությունից մինչեւ նորաձեւություն, պարաօլիմպիական խաղեր, ավանդական կոխի, նորաձեւության եւ ռետրո ոճի մե-**

# ՆԱՏՕ-ի փորձագիտական խումբը Հայաստանում է

**Հոկտեմբերի 11-ից մինչեւ հոկտեմբերի 13-ը Հայաստանում է ՆԱՏՕ-ի ռազմավարական հրամանատարությունների, Ամերիկայի Միացյալ Նահանգների եւ Կանադայի համատեղ փորձագիտական խումբը` Հայաստանի Հանրապետության զինված ուժերի պայմանագրային սերժանտական համակարգի բարեփոխումների հարցերով խորհրդատվության տրամադրման նպատակով: Այս մասին հայտնում են ՀՀ ՊՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից:**

**Այցի շրջանակներում փորձագիտական խմբի անդամները Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության եւ զինված ուժերի գլխավոր շտաբի համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ կքննարկեն խնդիրներ` նվիրված Հայաստանի Հանրապետության զինված ուժերում արտերկրի պայմանագրային սերժանտական կազմի հավաքագրման, պատրաստման եւ ծառայողական առաջխաղացման հարցերում միջազգային առաջավոր փորձի ներդրման հնարավորությունների ուսումնասիրմանը:**

Հ. Ա.

# «Եկեք բացենք Հայաստանի սահմանը»

## Կարսի «Գրանդ Անի» հյուրանոցում հայտարարել է «Հզոր Թուրքիա» կուսակցության նախագահը` դիմելով կառավարությանը

Հոկտեմբերի 10-ին ոչ խորհրդարանական «Հզոր Թուրքիա» կուսակցության գլխավոր նախագահ Թունա Բեքլեւիչը ուղեւորվել է Կարս, որտեղ էլ «Գրանդ Անի» հյուրանոցում մամուլի ասուլիս է տվել: Ասուլիսում Բեքլեւիչը, դիմելով երկրի օրենսդիր եւ գործադիր իշխանություններին, հետեւյալ կոչն է արել. «Կարսից կոչ ենք անում կառավարությանն ու Մեջլիսում ներկայացված կուսակցություններին, ասելով, որ եկեք բացենք այս սահմանադուռը, որպեսզի սահմանի բացման հարցը ավելի մեծ խնդիր չդառնա Թուրքիայի համար»:

Այնուհետեւ նա, «Սոնսանիե» կայքէջի վկայությամբ, ավելացրել է. «Մեր «Հզոր Թուրքիա» կուսակցությունը ձեռնամուխ է եղել Հայաստանի հետ մի շարք նախագծերի իրականացմանը, որոնցից մի քանիսը առնչվում են սահմանի բացմանը: Հատկապես կարեւորում ենք սահմանի բացման հարցում բարենպաստ հասարակական կարծիքի ձեւավորումը: Կարսը բախվում է տնտեսական բազում խնդիրների: Իմ կարծիքով, քաղաքը նմանվել է երակները խցանված մարմնի: Այստեղ բժշկական միջամտություն է հարկավոր: Եվ այդ միջամտությունը պետք է հանգեցնի սահմանի բացմանը: Նախնական փուլում սահմանի բացման եւ կողմերի հաշտեցման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելը մեր առաջնահերթ խնդիրներից են: Հիշեցնենք, որ Կարսի բնակչությունը քաղաքական հակվածություն է դրսեւորելու նրանց նկատմամբ, ովքեր սահմանը կբացեն կամ կնպաստեն բացմանը: Քանի դեռ սահմանը փակ է, կարսեցի երիտասարդությունը գործազուրկ, եւ Կարսում տնտեսությունը չի զարգանում, ապա սահմանի բացմանը հակադրվողները շարունակելու են հակադրության համար քաղաքական գին վճարել: Մինչեւ սահմանի բացումը ձեռք ձեռքի տալով միասին պայքարելու ենք: Հույս ունենք, որ սահմանը 2011-ին կբացվի»:

Հ. Չ.

# Պառլամեն/թ/ական անտրակտ




Ազգային ժողովի նիստի մեծ ընդմիջմանը ԱԺ կարմիր ֆոյեում մի խումբ պատգամավորներ զրուցում են:

**Վահան Հովհաննիսյան-** Ա՛յ մարդ, էս մեր գործարար պատգամավորների կրթական ցենզը շատ ցածր է, պետք է ԵԱՀԿ գրասենյակի Կապինոսին խնդրել, որ մի անվճար ծրագրով գոնե աշխարհում հայտնի թեւավոր խոսքերը նրանց սովորեցնեն, թե չէ ասում եմ՝ «սրբազան կով», սրանք կարծում են՝ իրենց վիրավորում եմ: Տո չէ, էլի, նետ, 1 մլրդանոց երկրում սրբազան կով ասելով՝ հասկանում են անձեռնմխելի, համարյա սրբի նման բան:

**Վիկտոր Դալլաքյան-** Դա էլի ոչինչ, այ մարդ, անհետեւեւանք անցավ ոնց որ, բա որ էդ մեր բոլոր գործարարները հաստ վզով են, բայց երբ ասի՝ հաստավիզ, մենակ մեկի պատգամավորներն առան վրաները, ու էստեղ ես քաշվա՝ էլ ընկերու քավորությունից հրաժարական տվեց, Նառան մյուս կողմից է ամեն օր տարբեր ելույթներ ունենում, ստիպված, ինչ անեի, ես էլ ամբիոնից ասի՝ չէ, էլի, նետ, կուժ, քեզ եմ ասել, կուլա, դու պետք է հասկանաս, կուլան ձեր շեֆը չէ...

Վ.Հ.- Չհասկացանք, բա հիմա էդ կուլան ո՞վ է...

Վ.Դ.- Ես էլ չհասկացա, հիմի կարողա՞ մի հատ էլ էդ կուլայի պատճառով ամբիոնից բանավոր հրաժարական գրեմ (բաժանում է դիմումի պատճեններն ու հեռանում)...

**Ստյոպա Սաֆարյան-** Մի րոպե, մի րոպե, էդ մասնավոր գործերը մի կողմ թողեք, Ղարաբաղը ձեռքից գնում է, «Ժառանգության» օրինագծի մասին մտածեք, ով ուրիշ բանի մասին խոսի, երկրի դավաճան է: Բայց հլա դուք հիմա մի բան ասեք՝ Հովիկ Աբրահամյանին Շվեյցարիայի արտգործնախարարը ասել է՝ Հայաստանի հետ բանակցում են հայ-թուրքական բանակցությունները շարունակության վերաբերյալ, իսկ մեր արտգործնախարարին ասել է՝ բանակցություն նիխթ, հիմա ո՞ւմ է ճիշտ ասել:

**Լյովա Խաչատրյան-** Արա, սպասի, ինչ Շվեյցարիայի արտգործնախարար, ինչ բան, փոխանակ ասեք, որ հակակարկտային կայանների կրակողները ծուռ են նշան բռնում ու կարկուտը ցրել չեն կարողանում, կարկուտն էլ թափվում ու բերքը փչացնում է՝ Շվեյցարիայի արտգործնախարար, էլ եսիմ ինչ...

**Վարդան Բոստանջյան-** Շվեյցարիայի արտգործնախարարը կսպասի, ավելի լավ է, դուք իմ դիմումին ծանոթացեք՝ Դալլաքյանի քավորությունից հրաժարվելու վերաբերյալ, էդ անխիղճը տեղը չի բերում՝ ե՞րբ որտե՞ղ ի՞նչ ասի...

Լ.Խ.- Արա, յա, բա քավորությունից դիմումո՞վ են հրաժարվում, էդ դեպքում դիմում գրելով երեւի կարելի է նաեւ քավոր դառնալ. հիմի ինձ պետք է էն ամենավերեւներից մեկի քավորը դառնալ, որ մի դիմում գրեմ, կլնի՞...

Վահան Հովհաննիսյան, Բոստանջյան,- Եսի՞մ...

**Ռաֆիկ Պետրոսյան** (մոտենալով).- Հլը բոլորդ սուսեք, էս ԱԼՄ-ի Կարապետիչը լրիվ ձեռից գնացել է, ինքը չգիտի՝ լավ, բա իրա ժուռնալիստներն ի՞նչ են անում էս շենքում բացի բուֆետ գնալուց, որ իրենց շեֆին չեն ասել՝ ես պատգամավորների աշխատավարձերի բարձրացման օրինագծի հեղինակը չեմ, դրանց շեֆն էլ աչքերը չէր փակի-բերանը բացի:

Լ. Խաչատրյան- Գրի սառույցին, պարոն Պետրոսյան, ըտենց անկապ բաներ են ասել՝ անցել գնացել ա...

Ռ. Պետրոսյան- Սառույցին գրելը իրավական կատեգորիա չէ, ես իրավագիտության դոկտոր եմ...

**Տիգրան Թորոսյան-** (վազելով դեպի դահլիճ՝ ընթացքից)- Ամոթ է, ամոթ, գիտության դոկտորը կառավարության վարորդի չափ աշխատավարձ է ստանում, դուք ինչի հետեւից եք ընկել...

Ռաֆիկ Պետրոսյան- Իյա, էս սա նոր արթնացա՞վ...

Վ. Հովհաննիսյան- Դե գիտե՞ք ինչ, մարդու իրավագիտակցությունը բխում է նրա կեցությունից...

(Ստեփան Սաֆարյանը նայում է ժամացույցին եւ ուղղվում դեպի դահլիճ)- Արագացրեք, ԼՂ հարցի քննարկումը վերսկսվեց, ի՞նչ տասներորդական բաներից եք խոսում...

**Վարդան Այվազյան-** (դահլիճ գնալու ճանապարհին)- Այ մարդ, էդ բոլորը հեչ, բա որ տեղական արտադրողը նեղանում է ինձանից՝ իր շահերը խորհրդարանում չպաշտպանելու համար...

**Գ. Ծառուկյան** (մոտենալով)- Կոնկրետ իմ շահերին ոչ ոք չի կարա կպնի, գլուխը պատին կտա, ուրիշ...

Ս. Սաֆարյանը՝ գլուխը դահլիճից հանելով- Ներս եկեք, ԼՂՀ ճանաչման օրինագիծն է քննարկվում...

Գ. Ծառուկյան- Գլուխդ պատով ես տալիս, ուրիշ...

Վ. Հովհաննիսյան- Ստյոպ ջան, դու հանգիստ գնա, մենք դեմ ենք օրինագիծը ձեր կողմից օրակարգ մտցնելուն, բայց որ մտցրել եք՝ կողմ ենք քվեարկելու...

**Գալուստ Սահակյան-** (մոտենալով)- ԼՂՀ-ն մենք վաղուց ենք ճանաչել, «Ժառանգությունը» քնից էլնում՝ բանից բեխաբար օրը մի օրինագիծ աղմուկ-աղաղակով բերում-մտցնում է օրակարգ:

**Կարեն Ավագյան-** (շնչակտուր վազելով)- Ստյոպ, արա, ձեր 5 հոգուց Ղարաբաղում մի կռված գոնե ունե՞ք, որ ԼՂՀ ճանաչելուց եք խոսում:

**Ս. Սաֆարյան** (գլուխը դահլիճի դռնից հանած)- Հա, Լարիսա Ալավերդյանը...

**Կ. Ավագյան**.- Իյա, Լարիսան «Ժառանգությունից» չէ...

Բոլորը մտնում են դահլիճ:

**Հ.Աբրահամյան-** (նիստը վարողի վահանակից)- Մի լոզեք, հաս-հաս թվերով ասեք՝ ինչը քանի՞ դրամով կթանկանա... վայ, կներեք, խառնեցի, մի խոսքով՝ երբ պետք ըլնի, էն վախտ էլ ԼՂՀ-ն կճանաչենք, փաստահավաք թե դաշտային առաքելություն, ինչ տարբերություն...

Նիստն ընդմիջումից հետո շարունակվում է:

Ընդմիջմանը կարմիր ֆոյեում էր
ԱՐՏԱՆԻՐՇՅԻ ՍՈՒՐԻԿԸ

# Գողերի ձեռքը հասավ Երեւանի քաղաքային պանթեոնին

Ցավալի է, որ անտերության է մատնված Երեւանի քաղաքային պանթեոնը, ուր իրենց վերջին հանգրվանն են գտել անվանի մտավորականները: Վերջին մի քանի տարում բազմաթիվ դեպքեր են գրանցվել, երբ գողերը, ոտնահարելով ամեն սրբություն, զբաղվում են դիակապտությամբ, գերեզմաններից թալանելով մետաղական ցանկապատեր, մետաղական իրեր, տառեր, անգամ կիսանդրիներ: Իսկ թե ինչո՞ւ պանթեոնի աշխատակիցները չեն կանխում այդ երեւույթները, որոնք գերեզմանատան մուտքի նստարանին նստած, գերեզմանատուն մեքենաներով մտնողներից գումար են վերցնում, փոխարենը տարածքում հսկողություն սահմանելու, պարզ չէ: Պարզ է միայն մի բան, որ ժամանակ առ ժամանակ պանթեոնում գրանցվում են կողոպուտի դեպքեր: Միայն սեպտեմբերին Հրաչյա Աճառյանի տապանաքարից մի կտոր է գողացվել, Երվանդ Քոչարի տապանաքարի վրայի մետաղյա դափնեպսակի տերեւներն են թալանվել, Վաղարշ Վաղարշյանի շիրմաքարից՝ նրա մետաղյա թիկնոցը: Իսկ հոկտեմբերին գողացել են գրող Դերենիկ Դեմիրճյանի կիսանդրին: Գրողի տուն-թանգարանի տնօրեն **Կարինե Ռաֆայելյանից** տեղեկացանք, որ այդ մասին հոկտեմբերի 6-ին գրող Անժելա Ստեփանյանի որդին է զանգահարել ու տեղեկացրել, որ դեռ սեպտեմբերին է նկատել կիսանդրու բացակայությունը:

Տկն Ռաֆայելյանն ասաց. «Դեմիրճյանի տապանաքարը պանթեոնի ամենատեսանելի վայրում է գտնվում: Երբ այցելեցինք գերեզման, տեսանք, որ գերեզմանը ավերված է»: Ոստիկանությանն ահազանգելուց հետո, տեղազննության արդյունքներով պարզվել է, որ կիսանդրին գողացել են առնվազն մեկ ամիս առաջ: Զարմանալի է, թե ինչպե՞ս են կարողացել 300 կգ քաշ ունեցող բրոնզե կիսանդրին աննկատ գողանալ եւ անգամ դուրս տանել պանթեոնի հսկիչներից թաքուն: Գուցե նրանց օգնե՞լ են...

Ցավալի են այսօրինակ փաստերը, երբ պղծվում են շիրիմները, գերեզմանները: Իսկ ինչո՞ւ են լռում կամ աչքաթող անում Էրեբունի վարչական տարածքի պատասխանատուները, ոստիկանությունը, որոնք պարտավոր էին հսկել, հոգ տանել, որ նման դեպքերը չկրկնվեն ու մեղավորներին հայտնաբերեն: Հիշեցնենք, որ ամիսներ առաջ Նոր Նորքի վարչատարածքում գտնվող Հայկի ու Տորք Անգեղի արձաններից գողացել էին մետաղական որոշ մասեր: Չնայած որ գողերը բռնվեցին դեպքի վայրում, սակայն առ այսօր գողացած մասերը չեն վերականգնվել:

Մի՞թե կարելի է մի քանի հազար դրամի համար զբաղվել մեր մեծ ննջեցյալների գերեզմանները, գերեզմանաքարերը պղծելով, թալանելով: Չէ՞ որ մի օր էլ իրենք են մահանալու...

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Երեւանը մենք ենք»

*1-ին էջից*

Երեւանը մանուկների քաղաքն է: Մայրաքաղաքի տոնը մանուկների հետ Կիրովի անվան մանկական այգում նշում էին ծաղրածուները, աճպարարները, խաղավարներն ու հեքիաթի հերոսները՝ տիկնիկային ներկայացումներով եւ զվարճալի խաղերով գունազարդելով տոնը:




Երեւանը նաեւ այնտեղ ապրող ազգային փոքրամասնությունների մայրաքաղաքն է: Իրենց երկրորդ մայրաքաղաքին երկրում ապրող ազգային փոքրամասնությունները՝ ռուսներ, հույներ, ուկրաինացիներ, շնորհավորեցին ազգային երգերով ու պարերով: Մոսկովյան պուրակում էլ տիրում էր ռոմանտիկ մթնոլորտ: Ռուբեն Հախվերդյանի հետ երգում էին նաեւ հավաքված հարյուրավոր երիտասարդները: Հյուսիսային պողոտայում «Վարպետաց քաղաք» խորագրով ցուցադրվում էին քանդակներ, հուշանվերներ, ձեռագործ տիկնիկներ:



Երեւանի տոնը շնորհավորելու նպատակով Երեւան էին ժամանել բազմաթիվ հյուրեր Սանկտ Պետերբուրգից, Խարկովից, Մարսելից, Լիոնից, «սփյուռքից»:

Երեւանում էր նաեւ Մոսկվայի քաղաքապետի տեղակալ **Սերգեյ Բայդակովի** գլխավորած պատվիրակությունը: Այցելության ժամանակ Երեւանի եւ Մոսկվայի միջեւ քննարկվել են 2008-2011թթ. համագործակցության ծրագրի հարցեր: Սերգեյ Բայդակովը Երեւանը շատ է հավանել: «Քաղաքը շատ մաքուր է: Լույսն է ավելացել, շատ են նորակառույցները, զարգացումն ակնհայտ է: «Էրեբունի-Երեւան» տոնակատարությունը մշակութային իրադարձություն է դարձել երեւանցիների կյանքում», ասաց նա:

**Անջելա եւ Փիթեր Սմիթները** Հայաստանում առաջին անգամ են: Հայաստանի եւ Երեւանի մասին լսել են Լոնդոնում ազգությամբ հայ հարեւանից: «Մեր հայ հարեւանը շատ լավն էր: Նա շատ է պատմել Հայաստանի, հայերի, ձեր ողբերգական անցյալի մասին: Դրա համար էլ որոշեցինք աշնանային կարճատեւ արձակուրդը անցկացնել Երեւանում: Չգիտեինք, որ ձեր մայրաքաղաքն այսքան հին պատմություն ունի եւ նման ոգեւորությամբ են նշում: Տպավորությունները հրաշալի են», ասաց Անջելա Սմիթը:

Փիթեր Սմիթն էլ հավելեց, որ չափազանց կարեւոր է երբ քաղաքի տոնը նշում են ոչ միայն երիտասարդները, այլեւ տարեցները: Ամուսինների վրա հսկայական ազդեցություն են թողել հատկապես Էրեբունի ամրոցն ու այնտեղ թատերական ներկայացումը: «Իսկ համեղ կերակուրներն ու հյուրասիրությունն ուղղակի զարմանալի էին», ասաց նա:

Տոնական միջոցառումների եզրափակիչ ակորդը Հանրապետության հրապարակում էր՝ հոգեւոր եւ աշխարհիկ ղեկավարության գլխավորությամբ, բազմահազար մասնակիցներով, համերգով եւ շքեղ հրավառությամբ: Հ. Հ.

# Դուբայ-Երեւան թռիչքները Flydubai ընկերությամբ

Դուբայի «flydubai» ավիաընկերությունը դեպի Երեւան թռիչքներ է իրականացնելու: Թռիչքները կմեկնարկեն նոյեմբերի 21-ին եւ կիրականացվեն շաբաթական 2 անգամ, իսկ դեկտեմբերի 15-ից՝ շաբաթական 3 անգամ: Երեւանը կդառնա «Flydubai» ավիաընկերության 25-րդ ուղղությունը: Նոր թռիչքը Հայաստանի բնակիչների համար նաեւ առաջարկում է դեպի Դուբայ ուղղությունը: «Flydubai»-ի նախագահ Ղաիթ ալ Ղաիթն այս առիթով ասել է. «Մեր նոր ուղղությունը դեպի Երեւան անչափ կարեւոր շուկա է «Flydubai»-ի համար: Երեւան քաղաքը հինավուրց պատմություն ունի, այն բնակեցված է եղել դեռեւս մ. թ.ա. 8-րդ դարում, ինչը նշանակում է, որ այնտեղ հազարամյակների պատմություն կա հայտնագործելու եւ ուսումնասիրելու»: Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ըստ Դանիլո Թյուրկի՝ յուրաքանչյուր դեպք առանձնահատուկ է

*Կոսովոյի եւ Արցախի հիմնախնդիրներում էական տարբերությունն այն է, որ Լեռնային Ղարաբաղը հաղթել է սեփական ուժերով, առանց ՆԱՏՕ-ի օգնության*

Հայկական կողմի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման առանցքային հարցի շուրջը մնում է անփոփոխ, խնդիրը պետք է լուծել բացառապես խաղաղ ճանապարհով, առանց ուժի կամ ուժի կիրառման սպառնալիքի, այսօր գոյություն ունեցող ձեւաչափով եւ միջազգային իրավունքի նորմերի խստիվ պահպանմամբ: Հայաստանում գտնվող Սլովենիայի նախագահի **Դանիլո Թյուրկի** հետ համատեղ ասուլիսում երեկ հայտարարել է Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսյանը**: Նրա խոսքերով՝ «Եվ որքան շուտ Ղարաբաղը լիարժեքորեն միանա բանակցություններին, այնքան հեշտությամբ կարելի է գալ խնդրի լուծմանը: Ավելի ճիշտ՝ որքան շուտ Ղարաբաղը լիարժեքորեն միանա բանակցություններին, այնքան մեր ակնկալիքները, դրական լուծման առումով, կարող են ավելի շատ լինել»:



Սերժ Սարգսյանի հրավերով հոկտեմբերի 10-ին պաշտոնական այցով Հայաստան ժամանած Սլովենիայի նախագահ Դանիլո Թյուրկի հետ համատեղ ասուլիսում Հայաստանի նախագահին ընդգծել է, որ Սլովենիան եւ Հայաստանը շատ ընդհանրություններ ունեն՝ համադրելի են բնակչությամբ, տարածքով, նույնիսկ ճակատագրով նման են:

Նախագահ Դանիլո Թյուրկը, ընդգծելով, որ պատմության մեջ առաջին անգամ է Սլովենիայի նախագահն այցելում Հայաստան, հավաստիացրել է, որ իր երկրում մեծ հիացմունքով են վերաբերվում հայ ժողովրդին եւ նրա բազմադարյա պատմությանը. «Հայաստանի պատմությունը կարելի է համեմատել երկար եւ հարուստ պատմություն ունեցող սակավաթիվ պետությունների հետ», ասել է Սլովենիայի նախագահը՝ խորհրդանշական համարելով Հայաստանի հնագույն մայրաքաղաքի օրը Երեւան այցելելու փաստը: Այս տարեսկզբին Լյուբլյանայում կայացած հայ մշակույթի փառատոնը Սլովենիայում վերջին շրջանի ամենատպավորիչ մշակութային իրադարձություններից մեկը համարելով՝ Դանիլո Թյուրկը նշել է, որ փառատոնի շրջանակներում իրեն հնարավորություն ընձեռվեց բացահայտելու հայ ավանդական ու ժամանակակից մշակույթի խորությունը:

Լրագրողները Հայաստանի եւ Սլովենիայի նախագահներին խնդրել են գնահատել տարածքային ամբողջականության եւ ինքնորոշման իրավունքի սկզբունքների հարաբերակցությանը՝ հիմք ընդունելով Կոսովոյի անկախության փաստը եւ հանգամանքը, որ դա առաջին եւ վերջին դեպքը չէ: Սլովենիայի նախագահ Դանիլո Թյուրկն ընդգծել է, որ երկու սկզբունքներն ինքնաբերաբար չեն գործում, այլ հաջորդում են մինչ այդ եղած որոշակի քայլերի ու իրադարձությունների: Դանիլո Թյուրկն ուշադրություն է հրավիրել այն հանգամանքին, որ Արդարադատության միջազգային դատարանը խնդրի առնչությամբ խորհրդատվական որոշման մեջ խուսափել է խոսել այդ հարցի մասին՝ միաժամանակ փաստելով, որ Կոսովոյի անկախության հռչակումը չի հակասում միջազգային իրավունքին: Ըստ Սլովենիայի նախագահի՝ յուրաքանչյուր դեպք առանձին է եւ առանձնահատուկ, եւ յուրաքանչյուր դեպքի համար պահանջվում են լուծումներ, որոնք կհամապատասխանեն ե՛ւ միջազգային իրավունքի նորմերին, ե՛ւ տվյալ իրավիճակի առանձնահատկություններին:

Սերժ Սարգսյանի գնահատականով՝ ինքնորոշման յուրաքանչյուր դեպք յուրահատուկ է, բայց իրավական որոշումները պետք է բխեն նույն սկզբունքից: Նախագահը հիշեցրել է, որ Արդարադատության միջազգային դատարանը Կոսովոյի գործը քննում էր մեկ հարցի պատասխան տալու համար. «Միակողմանի ինքնորոշման հռչակումը հակասում է միջազգային իրավունքին, թե՝ ոչ: Պատասխանը եղավ՝ ո՛չ, չի՛ հակասում»:

Անդրադառնալով հայ-ադրբեջանական հակամարտության նախապատմությանը՝ նախագահ Սարգսյանը հիշեցրել է խորհրդայնացման տարիներին Արցախն Ադրբեջանին բռնակցելու եւ ԽՍՀՄ փլուզման ընթացքում ԼՂ բնակչության միակողմանի ինքնորոշվելու փաստերը: Այսինքն, նախագահի խոսքով, գործել են միջազգային իրավունքին համահունչ: Նախագահ Սարգսյանի խոսքով, Կոսովոյի եւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրներում էական տարբերությունը հենց այն է, որ Լեռնային Ղարաբաղը հաղթել է սեփական ուժերով, առանց ՆԱՏՕ-ի օգնության, եւ այժմ համբերատար սպասում է այն պահին, երբ միջազգային հանրությունը կճանաչի նրա միակողմանի հռչակած անկախությունը:

Եվրոպական միությանն անդամակցելու համար Թուրքիային Սլովենիայի աջակցությունը բացատրելիս Դանիլո Թյուրկը համոզմունք է հայտնել, թե Թուրքիան ոչ միայն քաջ գիտակցում է այդ չափանիշները, այլ նաեւ պատրաստակամ է առաջ շարժվելու այդ չափանիշների պահպանմամբ «Բացառություններ չեն կարող լինել. այդ անդամակցության չափանիշները ստիպված եղավ բավարարել Սլովենիան, ստիպված է լինելու բավարարել նաեւ Թուրքիան»,- ասել է Է Թյուրկը, ավելացնելով, որ Թուրքիան այժմ Եվրոմիությանն անդամակցելու բանակցությունների փուլում է, սակայն այդ բանակցությունները շատ դանդաղ են առաջ շարժվում:

Սլովենիայի նախագահի պաշտոնական այցը կտեւի նաեւ այսօր: Այդ ընթացքում Դանիլո Թյուրկը կայցելի Մատենադարան եւ Հայաստանի նկարիչների միություն, կմասնակցի հայ-սլովենական բիզնես ֆորումին, կայցելի Մայր աթոռ Սուրբ Էջմիածին եւ հանդիպում կունենա Գարեգին Երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսի հետ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Կիրո Մանոյանն ու Մարիո Նալբանդյանը Բաքվում են

Շաբաթ օրվա համարում «**Ազգը**» տեղեկացրեց, որ հոկտեմբերի 11-12-ը Բաքվում կկայանա Սոցինտերնի ԱՊՀ-ի, Կովկասի եւ Սեւ ծով հանձնախմբերի ժողովը: Այդ նպատակով Բաքու պետք է մեկնեին նաեւ Սոցինտերնի անդամ ՀՅԴ ներկայացուցիչներ Մարիո Նալբանդյանն ու Կիրո Մանոյանը: Մենք նշեցինք, որ կան որոշակի անցագրային խնդիրներ՝ կապված դաշնակցական գործիչների Ադրբեջան այցելության հետ, սակայն երեկ մեկնարկած համաժողովին ՀՅԴ ներկայացուցիչները մասնակցել են: Ըստ ադրբեջանական աղբյուրների՝ Մանոյանն ու Նալբանդյանը սկզբում չեն մասնակցել համաժողովին, «սակայն հետո միացել են»: Ադրբեջանական կայքերը նաեւ գրում են, որ հայ քաղաքական գործիչների այցելությունը Բաքու լուրջ դժգոհություն է առաջացրել Ադրբեջանում:

Հիշեցնենք՝ Սոցինտերնի Բաքվում ընթացող համաժողովում քննարկվում են «տարածաշրջանային հակամարտությունները, տարածաշրջանի երկրներում զարգացումները եւ սոցիալ-ժողովրդավարական զարգացման հնարավորությունները»:

Հ. Ա.

# Երեւանում կազմակերպվելու է աշխատանքի տոնավաճառ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը նախատեսում է հոկտեմբերի 30-ին Երեւանում աշխատանքի տոնավաճառ կազմակերպել: Գործակալության պետ **Սոնա Հարությունյանը** «Արմենպրեսին» տեղեկացրել է, որ նախնական տվյալներով տոնավաճառին մասնակցելու են շուրջ 100 գործատուներ: Վերջիններս ներկայացնելու են արտադրության, առեւտրի, սպասարկման եւ այլ ոլորտների թափուր աշխատատեղերը: Տոնավաճառի նախապատրաստական աշխատանքներն ընթացքի մեջ են: Տոնավաճառի նպատակն է կազմակերպել աշխատանք փնտրողների եւ թափուր աշխատատեղ առաջարկող գործատուների հանդիպումը: Այս տարվա ընթացքում Գավառում կազմակերպված աշխատանքի տոնավաճառի միջոցով աշխատանք է գտել 97 , Վանաձորում՝ 41, Իջեւանում՝ 15, Գյումրիում՝ 38 մարդ: Ըստ նախնական տվյալների՝ հոկտեմբերի 27-ին աշխատանքի տոնավաճառ կազմակերպվելու է նաեւ Կոտայքի մարզում:

Ի. Պ.

ՔՆՆԱՐԿՈՒՄ

# Ներկուսակցական ժողովրդավարության խնդիրները Հայաստանում

Մամուլի ազգային ակումբում (ՄԱԱ) երեկ հերթական քննարկումն էր կազմակերպվել: ԱՄՆ Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (NDI) ՄԱԱ-ի հետ համատեղ վերսկսել է հասարակական-քաղաքական քննարկումների շարքը: Երեկվա քննարկումը կազմակերպվել էր «Ներկուսակցական ժողովրդավարության խնդիրները Հայաստանում» թեմայով: Կուսակցությունների, որպես ժողովրդավարական հաստատությունների, կայացման համար կարեւոր է ներկուսակցական ժողովրդավարության ապահովման խնդիրը: Իրենց դիտարկումներով եւ զեկուցումներով հանդես եկան տարբեր կուսակցությունների ներկայացուցիչները:

Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցության անդամ **Գագիկ Մելիքյանը** նշեց, որ իրենց կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը մշակվել է՝ ելնելով «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքից եւ բխում է սահմանադրության եւ օրենքների դրույթներից: «Կուսակցությունը գործում է ժողովրդավարության սկզբունքներով», հավելեց Գագիկ Մելիքյանը:

ԱԺ «Ժառանգություն» խմբակցության անդամ **Անահիտ Բախշյանն** էլ իր զեկույցում նշեց, որ մեր իրականությունն ու քաղաքական կուսակցությունների կանոնադրությունները հաճախ տարամիտվում են: «Եթե կուսակցությանը չի հաջողվում իր ներսում ապահովել ժողովրդավարություն, ապա ինչպե՞ս պետք է գա իշխանության եւ այդ չափանիշներն իրականացնի: Կարծում եմ՝ ընտրության ժամանակ հասարակության համար սա շատ կարեւոր ուղեցույց պետք է լինի», ասաց Անահիտ Բախշյանը: Վերջինիս խոսքով՝ «Ժառանգություն» կուսակցությունը քվեարկությամբ է կայացնում իր որոշումները, որոնք երբեմն կարող են այդքան էլ ճիշտ չլինել: «Մեծամասնությունը կայացնում է որոշում, եւ փոքրամասնությունը ենթարկվում է», ավելացրեց Ա. Բախշյանը:

ԱԺ ՀՅԴ խմբակցության քարտուղար **Արծվիկ Մինասյանը** չէ — 

Ա. Շահբազյանը: Նրա կարծիքով՝ մեզանում կուսակցությունները հաճախ ձեւավորվում են ընտրություններից առաջ. «Անդամագրումը լինում է պոտենցիալ ընտրողներին ցուցակագրելու խնդիր»:

Զեկուցումով հանդես եկավ նաեւ Ժողովրդական կուսակցության նախագահ **Տիգրան Կարապետյանը**: Ըստ նրա՝ կան կուսակցություններ, որոնք ասում են, թե ժողովրդավար են, սակայն իրենց տեղի կառույցների ղեկավարները պաշտոնատար են եւ լինելով պաշտոնատար՝ օգտագործում են տեղական ինքնակառավարման ռեսուրսը կամ կենտրոնական իշխանության ռեսուրսը. «Եվ ընդգրկելով ղեկավար մարմիններին՝ չինովնիկներին իրենց կուսակցությունների մեջ՝ վերածվում են օլիգարխիկ չինովնիկական կուսակցության, որը չի կարող համապատասխանել ժողովրդավարական սկզբունքներին»: Ըստ Տիգրան Կարապետյանի՝ Ժողովրդական կուսակցությունը ձգտում է հենվել ժողովրդի ներուժի վրա. «Մինչեւ այսօր իր հաջողությունների համար մեր կուսակցությունը պարտական է ժողովրդին»:

Քննարկման մասնակիցների կարծիքները երբեմն համընկնում էին, երբեմն խիստ իրարամերժ էին: Ինչեւէ, մասնակիցների կարծիքով՝ ընտրված թեման կարեւոր էր եւ օրակարգային:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ԼՂ հարցում Լեհաստանի դիրքորոշումը՝ խիստ չեզոք

Լեհաստանի դեսպան Զդիսլավ Ռաչինսկու փոխանցմամբ՝ ԼՂ հարցի կարգավորման վերաբերյալ Լեհաստանի դիրքորոշումն ու տեսակետը համընկնում են Եվրոմիության ներկայացրած երեք դիրքորոշմանը՝ հարգանք տարածքային ամբողջականության ու ազգերի ինքնորոշման իրավունքի նկատմամբ եւ հարցերի կարգավորումը լուծել բացառապես խաղաղ ճանապարհով ու կողմերի համաձայնությամբ: Վերջին սկզբունքը դեսպանը բնորոշում է որպես հիմքերի հիմք:

Վերջերս ադրբեջանական կողմը շնորհակալություն էր հայտնել Լեհաստանին ԼՂ հարցում ներկայացրած դիրքորոշման համար: Մեկնաբանելով շնորհակալությունը՝ դեսպանն ասաց, թե Բաքվում գնահատում են Լեհաստանի կշռադատված դիրքորոշումը: Լեհական մոտեցումը բարձր է գնահատում նաեւ պաշտոնական Երեւանը: «Ղարաբաղյան խնդրի նկատմամբ Լեհաստանը խիստ չեզոք դիրքորոշում է պահպանում: Երկրներից որեւէ մեկին չենք աջակցում՝ միաժամանակ կարծես աջակցելով երեքին: Այդ հարցը հնարավոր չէ լուծել արտաքին ազդեցությամբ: Այն Հայաստանի, Ղարաբաղի եւ Ադրբեջանի հասարակությունների համաձայնության հարցն է», ասաց դեսպանը՝ հակամարտության երեք կողմ ասելով ակնարկելով Ղարաբաղին: Անդրադառնալով Կոսովոյի վերաբերյալ ՄԱԿ-ի միջազգային դատարանի եզրակացությանը՝ Ռաչինսկին նշեց, որ Կոսովոյի անկախության հռչակումը միջազգային իրավունքի նորմերին չի հակասում: Նրա մեկնաբանությամբ՝ Կոսովոյում կան մի շարք վիճելի խնդիրներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր աղբյուրը, սակայն նրանցից յուրաքանչյուրն իր տեսակի մեջ յուրահատուկ է:

«Չի կարելի մի խնդրի նորմերն ու գնահատականները կիրառել մյուս խնդրի համար: Նույնն էլ՝ Ղարաբաղի հետ: Կարող ենք ասել, որ այդ գործընթացներն ինչ-որ տեղ իրար նման են, բայց միաժամանակ այդ խնդիրներից որեւէ մեկի վերաբերյալ եզրակացությունը չի կարող ավտոմատ տեղափոխվել մյուս խնդրի լուծման դաշտ»:

Անդրադառնալով հայ-լեհական հարաբերություններին՝ Ռաչինսկին նշեց, որ վերջին ամիսներին նկատվում է առաջընթաց, որակապես նոր հարաբերություններ են ձեւավորվում: Սակայն երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառությունը դեռեւս շատ ցածր է եւ կազմում է 30 մլն ԱՄՆ դոլար: Դեսպանի խոսքով՝ տնտեսական առումով Հայաստանը Լեհաստանի համար հետաքրքրական շուկա է՝ հաշվի առնելով հարեւանների հետ հարաբերությունների բարելավման գործընթացը:

Հ. Հ.

## Նոր հրատարակություններ

# Նրա անունն ու գործը հավերժելու են

Երեւանի «Մանմար» հրատարակչությունը վերջերս լույս է ընծայել վաստակաշատ բանասեր, լեզվաբան Խաչիկ Բադիկյանի «Էդուարդ Աղայան» խորագիրը կրող աշխատությունը՝ 168 էջ ծավալով: Գրքի նյութը վերաբերում է ջերմ ազգասեր, ականավոր հայագետ, լեզվաբան Էդուարդ Աղայանին, նրա կյանքին ու գիտական կենսագրությանը: Օգտվելով առանձին մարդկանց գրավոր ու բանավոր հիշողություններից, անձնական շփումներից ու հարաբերություններից, աղբյուրագիտական բազմաթիվ ու բազմաբնույթ գրքերից, խորազնին ուսումնասիրելով Էդուարդ Աղայանի կյանքի, անցած ճանապարհի դրվագները, դեպքերն ու իրողությունները, մեծանուն գիտնականի գիտամանկավարժական գործունեությունը, նրա թողած հայագիտական, լեզվաբանական աշխատությունները, խմբագրած հանդեսներն ու գրքերը՝ Խաչիկ Բադիկյանին հաջողվել է համակողմանիորեն ներկայացնել ակադեմիկոս Էդուարդ Աղայանի ամբողջական կերպարը: Կերպարի մի կողմում մեծատառերով մարդ ու քաղաքացի Էդուարդ Աղայանն է, մյուս կողմում՝ կատարյալ գիտնական Աղայանը՝ իր հայագիտական, լեզվաբանական, բանասիրական ու բանագիտական հայացքներով, լայն համապատկերով, գիտատեսական նոր մտքերով:

Մարդ ու քաղաքացի Էդ. Աղայանը բնութագրվում է իր առինքնող բնավորությամբ ու էությամբ, մարդկային ընդօրինակելի հատկանիշներով, վեհությամբ, հոգու լույսով ու գեղեցկությամբ, մարդկանց, իր ժողովրդին ու երկրին անձնուրաց նվիրվելու ու ծառայելու աստվածային շնորհներով, հոգեմտավոր հարուստ ներաշխարհով: Եվ ընթերցողն այդ խտացումներն ու ընդհանրացումները լիովին ընկալում է, երբ կարդում է գրախոսվող աշխատության «Մանկությունն ու պատանեկությունը», «Աղայանը համալսարանում», «Աղայանը դասախոս», «Աղայանը որպես ասպիրանտների գիտական ղեկավար», «Աղայանը որպես ընդդիմախոս», «Աղայանը բուհական ընդունելության եւ պետական քննությունների նախագահ», «Աղայան մարդ-քաղաքացին եւ նրա նախասիրությունները» վերնագրերը կրող բաժինները: Ընթերցողը հոգու աչքերով պարզորոշ տեսնում է մանուկ ու պատանի, ուսանող եւ ասպիրանտ, ուսուցիչ ու դասախոս եւ գիտամանկավարժական զանազան պաշտոններ վարած Էդուարդ Աղայանին՝ սքանչելի մարդուն ու քաղաքացուն:

Էդուարդ Աղայանը ուսանողների ու իր շրջապատի, իր հետ շփվող, իր հետ աշխատող բոլոր մարդկանց սիրելին էր, նրանց պաշտելի բարեկամն ու հարազատը, խորհրդատուն: Պատմում են, օրինակ, որ դեկան եւ դասախոս աշխատած տարիներին նա իր աշխատավարձից մաս էր հանում գյուղերից եկած եւ թոշակ չստացող առանձին ուսանողների, նեցուկ ու ապավեն էր դառնում շատերին: Բայց Էդ. Աղայանը միաժամանակ խիստ էր ու պահանջկոտ ուսանողների նկատմամբ: Նա սովորեցնում ու պահանջում էր կատարյալ ուսուցչի, դասախոսի վարպետությամբ: Նրա բնավորության մեջ հիշաչարություն չկար. նա բարության խտացում էր եւ իր ուսուցիչ, մեծն Հրաչյա Աճառյանի նման երբեք որեւէ ուսանողի «2» գնահատական չէր նշանակում: Նրան անչափ սիրելով ու հարգելով՝ ուսանողները քննության էին գալիս դասընթացը լիովին յուրացրած:

Աղայանը խիստ ու պահանջկոտ էր ասպիրանտների, ատենախոսություններ պաշտպանող անձանց նկատմամբ: Խիստ ու պահանջկոտ լինելով՝ նրանց ճանապարհին երբեք արգելակի դերում հանդես չէր գալիս: Եվ նրա այդ հատկանիշը միշտ ծառայում էր գիտության, կատարյալ ու բանիմաց մասնագետներ ձեւավորելու շահերին:




Մեր օրերի ուսանողները, ուսուցիչները, դասախոսները, մասնագետները՝ կարդալով Խ. Բադիկյանի ուշագրավ մենագրությունը, մարդկային շատ դասեր կարող են սովորել մարդ ու քաղաքացի Էդուարդ Աղայանից, եւ գրքի նպատակներից մեկն էլ հենց այդ է:

Վերը նշեցի, որ Էդ. Աղայանի կերպարի մյուս կողմում կատարյալ գիտնականն է, որ անկշռելի նպաստ է բերել հայագիտությանը, լեզվաբանությանը եւ, ընդհանրապես, հայոց ազգային մշակույթին: Եվ ահա գրախոսվող աշխատության մեջ քննաբանվում ու մեկնաբանվում են Էդ. Աղայանի բազմազան ու բազմաբնույթ գիտական հետազոտությունները: Դրանք վերաբերում են ընդհանուր եւ համեմատական լեզվաբանությանը, պատմական ու նկարագրական քերականությանը, հայոց լեզվի ու հայ լեզվաբանության պատմությանը, գրաբարին եւ բարբառագիտությանը, բառագիտությանը, հայերենի ուղղագրությանն ու ուղղախոսությանը, բառարանագրությանը եւ այլ խնդիրների:

Գրքում հանգամանորեն քննարկվում ու արժեւորվում են Էդ. Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն», «Գրաբարի քերականություն», «Ժամանակակից հայերենի հոլովումը եւ խոնարհումը», «Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի եւ հարակից հարցերի մասին», «Ընդհանուր եւ հայկական բառագիտություն», «Արդի հայերենի բացատրական բառարան» (երկու հատորով) եւ այլ աշխատություններ: Կարեւորն այն է, որ Խաչիկ Բադիկյանը ոչ թե սոսկ ներկայացնում է Էդ. Աղայանի այս կամ այն աշխատությունը, այլ արժեքավորում եւ առարկայորեն նշում է գիտության բերած նորույթը: Այլ խոսքով ասած՝ Էդ. Աղայանի այս կամ այն աշխատությանն անծանոթ մարդը Խ. Բադիկյանի վերլուծությունից կարող է բավարար պատկերացում կազմել տվյալ գրքի մասին: Եվ իրոք, Խ. Բադիկյանի մենագրության շատ էջեր, հատվածներ ունեն դասագրքային արժեք: Եվ այս հանգամանքը գրախոսվող գրքի առավելություններից մեկն է:

Հրաչյա Աճառյանը շատ էր սիրում ու բարձր գնահատում իր անզուգական սան Էդ. Աղայանին: Նա 1950 թ. նոյեմբերի 17-ին գրել է. «Իմ անկարողության պատճառով (նկատի է ունեցել իր տեսողության ծայրահեղ վատացումը, առողջության թուլացումը- Ռ. Դ.) առհասարակ ձեռագրերս թողնում եմ ընկ. Էդիկ Աղայանի խնամքին, որպեսզի հետեւի հրատարակության գործին»:

Եվ ահա՛, 1951 թվականից մինչեւ 1984 թ. Էդ. Աղայանը խմբագրեց, գրեց առաջաբաններ եւ հրատարակեց Հրաչյա Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» (2-րդ մաս), «Լիակատար քերականություն» (8 գիրք), «Քննություն Վանի բարբառի», «Արմատական բառարան» (չորս հատորով), «Կյանքիս հուշերից», «Հայոց գրերը» կոթողային հսկայածավալ աշխատությունները: Դրանք նույնպես մանրամասնորեն քննարկվել են Խ. Բադիկյանի գրքում:

Էդ. Աղայանը նաեւ դպրոցական ու բուհական մի շարք դասագրքերի ու ձեռնարկների հեղինակ է: Խ. Բադիկյանը մասնագիտորեն քննարկել ու արժեքավորել է Էդ. Աղայանի գրած դասագրքերն ու ձեռնարկները, մասնանշել դրանց ուսուցողական դերն ու նշանակությունը, հատկանշական կողմերը:

Էդ. Աղայանը միաժամանակ փայլուն գրականագետ էր, տոմարագետ: Նա անչափ սիրում էր հայ եւ համաշխարհային գրականությունը. անգիր կարող էր ասմունքել հարյուրավոր երեւելի կտորներ՝ ամենատարբեր գեղարվեստական գործերից: 1971 թ. լույս տեսավ Էդ. Աղայանի «Դրվագներ Արեւելքի գրականության պատմության» (243 էջ) գիրքը, որի մեջ գրականագետի խորաթափանցությամբ վերլուծել ու մեկնաբանել է Ֆիրդուսու, Օմար Խայամի, Նիզամի Գյանջեւիի, Ալիշեր Նավոիի առանձին ստեղծագործություններ, նշել դրանց գիտական, գեղարվեստական առանձնահատկությունները: Խ. Բադիկյանը վերլուծական խոսք է ասում նաեւ Աղայանի հիշյալ գրքի մասին, օրինակելի, ուսուցողական խոսք:

Հայտնի է Էդ. Աղայանի «Ակնարկներ հայոց տոմարների պատմության» (1986 թ., 300 էջ) արժեքավոր աշխատությունը: Խ. Բադիկյանի վերլուծությամբ ընթերցողը բավարար չափով պատկերացում է ստանում հայոց հին տոմարների մասին նույնպես: Ուշագրավ են հայոց հին ամսանունները, օրանունները, մոլորակների անունները, համաստեղությունները, ցույց են տրված բնիկ հայերեն եւ փոխառյալ անունները եւ այլն:

Գրախոսվող աշխատությունն ավարտվում է ակադեմիկոս Էդ. Աղայանի կարապի երգի՝ «Լեզվաբանական հետազոտություններ» խորագրով գրքի (տպագրվել է հետմահու) հանգամանալից վերլուծությամբ ու արժեւորումով:

Աշխատության վերջում ներկայացված է Էդ. Աղայանի գրքերի, հոդվածների, գրախոսությունների մատենագիտական ցանկը: Հրապարակումների քանակն անցնում է 160-ից: Դրանց էլ գումարվում է Էդ. Աղայանի խմբագրած գրքերի (42) ցանկը, որ կազմել է Խ. Բադիկյանը: Նշված է նաեւ Աղայանի թարգմանած եւ փոխադրած գրքերի ցանկը: Այդ բոլորի էջերը հասնում են տասնյակ հազարների: Եթե դրանց էլ հավելենք Էդ. Աղայանի մանկավարժական-դասախոսական երկար տարիների աշխատանքը, պաշտոնեական ծառայությունները, ծախսած ժամանակն ու էներգիան, ստացվում է մի այնպիսի վիթխարածավալ վաստակ՝ ծանրակշիռ ներդրումներով, որ կարող են ունենալ փոքրաթիվ մարդիկ: Եվ այդ եզակի այրերից մեկը ընդհանուր եւ համեմատական լեզվաբանությանը, հայոց լեզվի պատմությանը, ժամանակակից գրական հայերենի առանձին խնդիրների բացահայտմանը, բարբառագիտությանը, բառարանագրությանը, բանագիտությանը, նույնիսկ հայոց տոմարագիտությանը, իրանագիտությանը շատ մեծ ավանդներ ներդրած Էդուարդ Աղայանն է, որի մեծիմաստ ու համակրելի կերպարը վեր է հառնում Խաչիկ Բադիկյանի ուշագրավ եւ հույժ ուսանելի աշխատության մեջ՝ խորին հարգանք ու ակնածանք առաջացնելով ընթերցողի եւ նրան ճանաչողների մեջ: Եվ այդ ջերմ հայրենասեր ու ազգասեր մեծ հայորդին ապրելու ու հավերժելու է դարերի հոլովույթում, հայագիտության ներկա ու գալիք տարեգրությունների էջերում:

**ՌՈՍԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ**

# «Դիվանագիտություն»՝ անհրաժեշտ գիրք



Օրերս հրապարակ իջավ «Մուղնի» հրատարակչության հրատարակած աննախադեպ, տարիներ սպասված, մի մեծ բաց լցնող, մեր ժողովրդին ավելի քան անհրաժեշտ «Դիվանագիտություն» վերտառությամբ մի գիրք:

Մեր օրերում հրատարակվող, շատ հաճախ անմակարդակ գրքերի ֆոնին այս աշխատությունը փոխեց, ապացուցելով, որ դեռ կա ներուժ, դեռ կա գրիչ ունեցող հեղինակ, դեռ կա բարձր պրոֆեսիոնալիզմ ունեցող մասնագետ:

Ո՞վ է գրքի հեղինակը:

Ընթերցող հասարակայնությանը հայտնի մի անուն, որ տարիներ շարունակ հանդես եկավ մամուլում եւ օրինաչափորեն հասավ ընթերցողի սեղանին գիրք դնելու մակարդակին:

Չնայած իր բարձր կարողություններին, նա չհավակնեց մեկ անգամից գիրք հեղինակելուն, որով եւ ավելորդ անգամ հեղինակ Արման Նավասարդյանը ցույց տվեց իր առօրյայում եւս դիվանագետ լինելը, այսօրվա երիտասարդ դիվանագետներին օրինակ տալով, թե աստիճանական զարգացումն է, որ մասնագետին կայուն պատվանդան է ստեղծում:

Չնայած անվանը, գիրքը կարդացվում է գեղարվեստական գրքի նման, հեղինակը իրեն զգում է «ձուկը ջրում», իր ափսեի մեջ, երեւում է, որ նա չի «ծամել գրչի պոչը», բառ ու միտք փնտրել: Ասելիքը եղել է հորդ ու հստակ, եւ եթե Պարույր Սեւակն իր «Անլռելի զանգակատան» համար ասել էր, թե Աստված թելադրում է, ինքն էլ՝ գրում, ապա այստեղ ես կասեի՝ նյութի խոր իմացությունը, կենսափորձը, տարիները թելադրել են, իսկ հեղինակ Նավասարդյանը գրել է:

Վերջապես ի՞նչ է գրել:

Մի քանի օրինակ միայն գրքի գլուխներից, որոնք շատ են մեկ հոդվածում լրիվ վերլուծելու:

Հետաքրքրագույն գլուխ է 1-ինը՝ «Դիվանագիտության հոգեբանական ասպեկտները», որում՝ «դիվանագիտական զրույց» իր բաղադրիչներով, պաշտոնական, ոչ պաշտոնական, հանպատրաստի, նրա նախապատրաստությունը, զրույցն ու արվեստը եւ այլն:

Ոչ միայն դիվանագետներին, այլեւ բոլորին շատ անհրաժեշտ մի ենթագլուխ՝ «Լսելը եւ լռելը խոսելուց դժվար է»: Այստեղ կոմենտարն ավելորդ է: Միայն պետք է կարդալ ու լռել ... Հրաշալի է...

«Ոչ խոսքային հաղորդակցություն»: Մի աննման ենթագլուխ, որ ուզում ես նորից ու նորից կարդալ, եւ ժապավենի նման աչքիդ առաջ են գալիս կերպարներ, պաշտոնյաներ, ընկեր, բարեկամ, հանրահայտ անձեր, որոնց տեսել ու տեսնում ենք, բայց նշանակության եւ օրինաչափության սահման չենք դնում:

Քանի նախադասությամբ կարող ես մեկնաբանել, բացատրել այսպիսի ենթագլուխ դարձած ֆրազ՝ «Ժպտացեք հեռախոսի մեջ»: Միայն մեկ բան. պետք է կարդաս ու լռես, գուցե եւ խորհես ...

Մարդկային հմայք, լոյալություն, հումոր, հակիրճություն, չափի զգացողություն եւ շա՜տ ու շա՜տ նման մտքեր ու շարադրանք, որոնց վայելքը թողնում եմ ընթերցողին, քանզի հիրավի վայելք է:

Ոչ պակաս հետաքրքիր է «Մտորումներ հայկական քսանամյա դիվանագիտության մասին» գլուխը, ուր թե՛ բարձր պրոֆեսիոնալիզմի, թե՛ օբյեկտիվության, թե՛ սրտացավության երանգներով ներկայացվում են մեր հանրապետության արտաքին քաղաքականության դրական ու բաց կողմերը, նրա ղեկավարների լավն ու վատը, Հայաստանի դեսպանատների գործունեությունների ոլորտներն ու առաքելությունները:

Հաջորդը «XX դարի հայազգի անվանի դիվանագետներ» գլուխն է, ուր ընթերցողը կգտնի թե՛ ճանաչված, թե՛ անարդարացիորեն չճանաչված անվանի հայ դիվանագետների ոչ միայն անուններ, այլեւ նրանց կենսագրություններն ու գործունեության հետաքրքրագույն փաստեր ու օրինակներ:

«Նամակներ արտերկրից» գլխում հեղինակն անդրադառնում է զանազան թեմաների, որոնք կապված են դիվանագիտության ասպարեզի հետ, հիմնականում, հանրահայտ փաստեր են, սակայն թե՛ ներկայացման ձեւը, թե՛ մեկնաբանությունները նորից վկայում են, որ հեղինակի նյութի իմացությունն անսպառ է, երեւույթին նայելու իր տեսանկյունը՝ յուրահատուկ ու օբյեկտիվ:

Գրքի նկարները նայվում են հետաքրքրությամբ, այնտեղ կան շատ ու շատ նշանավոր մարդիկ, գիրքը շահել է նաեւ ծաղրանկարիչ Չալիկյանի տաղանդավոր մատիտի շնորհիվ:

**ՌՈՒԲԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ**

# Ռուս-օսական համաձայնագիրն ու «ծեր աղվես» Շեւարդնաձեն

Ռուսաստանը եւ Հարավային Օսիան դիվանագիտական ներկայացուցչությունների բացման համաձայնագիր են ստորագրում: Այն ժամանակ, երբ դեռ վրացական իշխանությունների համար տարբեր առիթներ օգտագործվում են հայտարարելու, թե Վրաստանի «տարածքային ամբողջականությունը պետք է վերականգնվի՝ վերադարձնելով Աբխազիան եւ Հարավային Օսիան», հերթական փաստաթուղթն է ստորագրվում այդ տարածքների եւ Ռուսաստանի միջեւ, ինչը բնավ էլ չի կարող նշանակել, թե այդ գործընթացները կարող են դադարեցվել կամ չեղյալ հայտարարվել՝ որեւէ պարագայում Աբխազիայի եւ Հարավային Օսիայի «ապաանկախացման» տեսքով:

Դիվանագիտական ներկայացուցչություններ տեղակայելու համաձայնագիրը ստորագրում են Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի եւ Հարավային Օսիայի ԱԳ նախարար Մուրատ Ջիոեւը: Վրացական լրատվամիջոցներն, իրենց հատուկ պիտակավորումներով, փոխանցում են օսական լրատվամիջոցների տեղեկատվությունը, որ թեեւ երկու երկրների դեսպանություններն արդեն իսկ գործում են միմյանց տարածքում, սակայն համաձայնագիրը կապահովի այս կառույցների աշխատանքը նաեւ իրավական ոլորտում:

Հետաքրքրական է, որ այս գործընթացներին զուգահեռ, բարձրաձայնելով տարածքային ամբողջականության մասին, Վրաստանը ձգտում է ՆԱՏՕ, այն դեպքում, երբ Վրաստանի նախկին նախագահ, ԽՍՀՄ նախկին արտգործնախարար Էդուարդ Շեւարդնաձեն կարծիք է հայտնել, թե Ռուսաստանը կարող է ՆԱՏՕ-ի առջեւ հարց դնել Վրաստանին այդ դաշինքի կազմում ընդգրկել առանց Աբխազիայի եւ Հարավային Օսիայի:

Ըստ վրացական «Ասավալի-դասավալի» թերթի, որից մեջբերում է արել News.am կայքէջը, Շեւարդնաձեն նշել է, թե Ռուսաստանի հետ պետք է «բարիդրացիական եւ գործընկերային հարաբերություններ պահպանել»: Ըստ Շեւարդնաձեի, «Եվրոպային, ՆԱՏՕ-ին, Վրաստանին բոլորին անհրաժեշտ է լավ հարաբերություններ պահպանել Ռուսաստանի հետ»:

Վրաստանը, ըստ նախկին նախագահի, չպետք է համաձայնի, այլապես հավերժ կկորցնի Աբխազիան եւ Հարավային Օսիան: Շեւարդնաձեն նաեւ նշել է, թե Վրաստանը պետք է հանի իր զորակազմը Աֆղանստանից: Նա նաեւ կոչ է արել երկիրը տարանցման ուղի չդարձնել Աֆղանստան ռազմական նշանակության բեռների համար: «Դա փաստացի պատերազմ կլինի Աֆղանստանի հետ», ասել է նա:

Ա. Հ.

# Մոսկվայի քաղաքապետի թեկնածուները չորսն են

*10 օրից Մեդվեդեւը կկատարի իր ընտրությունը*

Ռուսական բոլոր իշխանական մարմիններում մեծամասնություն՝ «Եդինայա Ռոսսիա» կուսակցությունը նախագահ Դմիտրի Մեդվեդեւին է ներկայացրել Մոսկվայի քաղաքապետի 4 թեկնածուներին: Նրանք են ՌԴ փոխվարչապետ Սերգեյ Սոբյանինը, ՌԴ տրանսպորտի նախարար Իգոր Լեւիտինը, Նիժնի Նովգորոդի նահանգապետ Վալերի Շանցեւը եւ Մոսկվայի քաղաքապետի տեղակալ Լյուդմիլա Շվեցովան: Մեդվեդեւն արդեն հայտարարել է, որ անձամբ հանդիպել է քաղաքապետի բոլոր թեկնածուների հետ. «Ես կարծում եմ, որ նրանցից յուրաքանչյուրը կարող է ղեկավարել այնպիսի խոշոր քաղաք, ինչպիսին է մեր մայրաքաղաքը», նշել է Մեդվեդեւը, հավելելով, որ այժմ, համաձայն ընթացակարգի, ինքը կկատարի իր ընտրությունը եւ կներկայացնի Մոսկվայի խորհրդարանին: Իսկ համաձայն ընթացակարգի՝ քաղաքապետի պաշտոնը պետք է հաստատվի մինչեւ 10 օրը:

Հիշեցնենք, որ նախկին քաղաքապետ Յուրի Լուժկովի պաշտոնանկությունից հետո ՌԴ մայրաքաղաքը ղեկավարում է քաղաքապետի տեղակալ, Երեւանի եւ Գյումրիի պատվավոր քաղաքացի, 74-ամյա Վլադիմիր Ռեսինը: Ավելի վաղ նշվում էր, որ Ռեսինը նույնպես գոնե կմտնի քաղաքապետի թեկնածուների ցանկ, սակայն նա նշել է, որ այդ քայլին չի գնա. «Կարծում եմ, որ քաղաքապետ պետք է դառնա ինձանից առնվազն 20-25 տարով կրտսեր գործիչ, եւ ես անգամ չեմ էլ պատրաստվում ներկայացնել իմ թեկնածությունը», ասել է Ռեսինը «ՆՏՎ»-ին տված հարցազրույցում: Քաղաքապետի հավանական թեկնածուների շարքում տալիս էին նաեւ ՌԴ նախագահի գործերի կառավարիչ Վլադիմիր Կոժինի եւ ՌԴ արտակարգ իրավիճակների նախարար Սերգեյ Շոյգուի անունները, սակայն նրանք չկան թեկնածուների ցուցակում:

Հ. Ա.

# Օբամայի եւ Բուշի վարկանիշները գրեթե հավասարվել են

ԱՄՆ բնակիչներն այլեւս չեն կարծում, թե Բարաք Օբաման ավելի լավ է կատարում նախագահի պարտականությունները, քան պաշտոնում նրան նախորդած Ջորջ Բուշը: Այդ են վկայում CNN/Opinion Research Corporation-ի անցկացրած հանրային հարցման արդյունքները:

Հարցման մասնակիցները Օբամային եւ Բուշին պետք է համեմատեին որպես նախագահների: Արդյունքների համաձայն, 47 տոկոսը գտնում է, որ Օբաման Բուշից լավ է կատարում իր նախագահական պարտականությունները: 45 տոկոսը նախապատվությունը տալիս է Բուշին:

CNN-ը նշում է, որ 2009-ին անցկացված համանման հարցման ժամանակ Օբաման Բուշի նկատմամբ ստացել է 23 տոկոսի առավելություն, մինչեւ այժմ տարբերությունը 2 տոկոս է:

Չնայած դրան, ամերիկացիները առաջվա պես վստահ են, որ իրենք ճիշտ ընտրություն են կատարել 2008-ի նախագահական ընտրություններում: Հարցման մասնակիցների միայն 42 տոկոսն է կարծում, թե հանրապետական Ջոն Մակքեյնը ընտրվելու դեպքում Օբամայից լավ նախագահ կդառնար: Տվյալ հարցին պատասխանելիս հարցման մասնակիցների 50 տոկոսը նախապատվությունը տվել է Օբամային:

# Մեքսիկայի նախագահը քննադատեց մարիխուանային առնչվող կալիֆոռնիական օրինագիծը

Մեքսիկայի նախագահ **Ֆելիպե Կալդերոնը** քննադատել է Կալիֆոռնիայի այն օրինագիծը, որով նախատեսվում է օրինականացնել մարիխուանայի փոքր քանակությունները:

«Լոս Անջելես թայմս» թերթը մեջբերում է նախագահի այն խոսքերը, որ նահանգի իշխանությունների օրինագիծը կարող է ի չիք դարձնել թմրամաֆիայի դեմ մղվող պայքարում իր կառավարության գործադրած ջանքերը:

Կալդերոնը մարիխուանայի «բուժական օգտագործման» վերաբերյալ կալիֆոռնիացիների պնդումները որակել է «անհեթեթություն», ավելացնելով, որ ինքն ամերիկացիներից ակնկալում է միանգամայն ուրիշ վերաբերմունք:



«Կարծում եմ, ամերիկացիները բարոյական իրավունք չունեն դատապարտելու մեքսիկացի հողագործին, որին փողը ստիպում է մարիխուանա աճեցնել հյուսիսամերիկյան անհագ շուկան լցնելու համար», հայտարարել է Կալդերոնը:

Կալիֆոռնիացի ընտրողների քննությանը ներկայացված թիվ 19 ուղղումը ենթադրում է մարիխուանայի փոքր քանակության օգտագործման եւ պահպանման օրինականացում, ինչպես նաեւ դրա աճեցում, տարածում եւ եկամուտների հարկում իշխանությունների խիստ վերահսկողության ներքո:

Օրինագիծը թեժ վիճաբանություններ է հարուցել ԱՄՆ-ում եւ Մեքսիկայում: Դրա կողմնակիցները հավաստիացնում են, թե փաստաթղթի ընդունումը կթուլացնի թմրամաֆիայի դիրքերը, իսկ հակառակորդներն ասում են, որ պահանջարկի աճը կհանգեցնի սոսկ թմրակարտելների հզորացմանը:

Կալդերոնի խոսքերով, թմրադեղերը սպանում են մշտապես՝ թե՛ պատրաստման փուլում (ինչպես Մեքսիկայում) եւ թե՛ օգտագործման փուլում (ինչպես ԱՄՆ-ում): Վերջին տարիներին Մեքսիկայի կառավարության եւ թմրամաֆիայի միջեւ ծավալված անզիջում պայքարն արդեն հազարավոր զոհերի պատճառ է դարձել:

ԱԳՐԵՍԻԱ

# Բեռլինում մահմեդական աշակերտները ճնշում են գերմանացիներին

Գերմանիայի ինտեգրման գործերի նախարար **Մարիա Բրեմերը** Passauer Neuen Presse թերթին տված հարցազրույցում հայտարարել է, որ իշխանությունները մի շարք միջոցներ կձեռնարկեն Բեռլինի որոշ դպրոցներում ներգաղթյալ աշակերտների կողմից գերմանացիների հանդեպ դրսեւորվող հարաճուն խտրականության կապակցությամբ:

«Արդեն բավական շատ են այն դեպքերը, երբ աշակերտները եւ ուսուցիչները ստիպված են լսել գերմանացիներին ուղղված թշնամական արտահայտություններ», ասել է նախարարը: Նրա խոսքերով, անկարելի է համակերպվել այն փաստի հետ, որ դասամիջոցների ժամանակ երեխաները վախենում են դպրոցի բակ դուրս գալ:



Սեպտեմբերի վերջերին Բեռլինի «Թագեսշպիգել» թերթը հաղորդեց ներգաղթյալ համադասարանցիների կողմից գերմանացի աշակերտների ճնշման բազմաթիվ դեպքերի մասին: Բեռլինի Կրոյցբերգ շրջանում բնակվում են առավելապես մահմեդականներ: Շրջանում աշխատող ուսուցիչներից մեկի խոսքերով, գերմանացի աշակերտները հայտնվել են «մերժված, սադրանքների ու խտրականության ենթարկված փոքրամասնության» վիճակում:

Ուրիշ ուսուցիչներ խոսում են յուրօրինակ «քաղաքական ծայրահեղականության» մասին, որի զոհերն են դառնում ոչ միայն գերմանացիները, այլեւ բոլոր ոչ մահմեդականները: Հեկտոր Պետերսենի անվան հանրակրթական դպրոցի երկու ուսուցիչներ կրթության եւ գիտության աշխատողների արհմիության Berliner Lehrerzeitung պարբերականում տպագրել են հոդված «Թշնամանք դպրոցներում գերմանացիների հանդեպ» վերնագրով, որտեղ պատմում են իրենց ամենօրյա փորձի մասին:

Հոդվածում գերմանացի աշակերտների վիճակը (մանավանդ դասամիջոցներին, դպրոցի բակում) համեմատվում է ճիպոտահարության պատժի հետ: Գերմանացի աշակերտներին ծաղրում, վիրավորում եւ սպառնում են: Միմյանց ինչ-որ կերպ աջակցելու համար նրանք ստիպված են միավորվել յուրօրինակ «փոխօգնության ընկերությունների» մեջ:

Ուսուցիչները նման իրավիճակի պատճառներից մեկը համարում են «արեւմտյան արժեքների եւ իսլամի ավանդապաշտական պատկերացումների մշակութային հակամարտությունը»:

Հեկտոր Պետերսենի անվան դպրոցի տնօրեն **Դիտմար Պագելը** իր հերթին նշում է, որ մահմեդական աշակերտների գործողություններն ուղղված են ոչ միայն գերմանացիների, այլեւ հրեաների եւ ամերիկացիների, առհասարակ բոլոր ոչ մահմեդականների դեմ: Նա այս ամենի համար պատասխանատու է համարում մզկիթներից մեկում ձեւավորված տեղական մահմեդական միավորմանը, որը երեխաների մեջ սերմանում է ագրեսիվություն:

# Կիմ Չոն Ունը ներկա է գտնվել զորահանդեսի



ԿԺԴՀ ղեկավար Կիմ Չոն Իրը կրտսեր որդու՝ Կիմ Չոն Ունի հետ ներկա է գտնվել Փենյանում հոկտեմբերի 10-ին կազմակերպված զորահանդեսին:

Ֆրանսպրեսը նշում է, որ ԿԺԴՀ պատմության մեջ խոշորագույնը դարձած զորահանդեսը մայրաքաղաքի կենտրոնում անցկացվել է կառավարող Աշխատանքային կուսակցության 65-ամյակի առթիվ: Ռենհապ գործակալության տվյալներով, զորահանդեսին մասնակցել են 10 հազար զինծառայող, զրահատեխնիկա, հրթիռային համակարգեր եւ հրետանային կայանքներ:

Հյուսիսկորեական լրատվամիջոցները զորահանդեսի կապակցությամբ հիշատակում են միայն Կիմ Չոն Իրի անունը: Սակայն հարավկորեական Ռենհապ գործակալությունը նշում է նաեւ Կիմ Չոն Ունի անունը, որին համարում են հոր հավանական իրավահաջորդ պետության ղեկավարի պաշտոնում:

Հարավային Կորեայի եւ Արեւմուտքի ԶԼՄ-ները կարծում են, որ Կիմ Չոն Ունը Կիմ Չոն Իրի իրավահաջորդ է հռչակվել սեպտեմբերին Փենյանում կայացած կուսակցական ընդլայնված ժողովում, որն առաջինն էր 1980-ի համանման կուսկոնֆերանսից հետո: Սեպտեմբերյան ժողովից հետո պաշտոնապես հայտարարվեց միայն, որ Կիմ Չոն Ունը պաշտոն է ստացել Աշխատանքային կուսակցության կենտկոմում եւ դարձել է կուսակցության կենտրոնական ռազմական հանձնաժողովի փոխնախագահ:

Հարավկորեական գործակալությունը զորահանդեսին Կիմ Չոն Ունի ներկայության փաստը համարում է երկրում նախապատրաստվող իշխանափոխության ապացույց: Ավելի վաղ՝ հոկտեմբերի 9-ին Կիմ Չոն Ունը հոր հետ մասնակցել էր Կենտրոնական մարզադաշտում Աշխատանքային կուսակցության 65-ամյակին նվիրված հանդիսություններին:

# Արմավիրը նույնպես երգեց ռուսերեն եւ դա արեց հաճույքով

Հոկտեմբերի 8-ին «Երգը բարեկամության կամուրջն է» ռուսական երգի դպրոցական փառատոնը հասավ Արմավիրի մարզ: Մեծամորի, Նորավանի, Սարդարապատի միջնակարգ դպրոցներում ու Արմավիրի 5-րդ դպրոցում, որն ամենամեծն է մարզում, այդ օրը գերիշխում էր ռուսերենը, ռուսականը, ընդ որում` ոչ թե որպես օտար լեզու, այլ հիրավի բարեկամության կամուրջ:

Ռուսաստանի հայերի միության 10-ամյակին նվիրված Միության ձեռնարկած երգի փառատոնի վերաբերյալ **«Ազգը»** նախորդ համարներում տեղեկացրել է: Փառատոնն անցկացվում է նաեւ ՀՀ կրթության եւ գիտության, մշակույթի նախարարությունների, մարզպետարանների հովանավորությամբ. Արմավիրի մարզում մեզ ուղեկցում էին մարզպետարանի մշակույթի եւ սպորտի վարչության պետ Թովմասյանը, մարզպետարանի այլ ներկայացուցիչներ:

## Ռուսական հեքիաթը` Մեծամորի դպրոցում

Դպրոցն ունի ռուսերենի երեք ուսուցիչներ (ընդ որում` մեկը ազգությամբ չինուհի է), սակայն նրանց վարպետության շնորհիվ Մեծամորի դպրոցում աշակերտները ոչ միայն խոսում են ռուսերեն, այլեւ հրաշալի մարմնավորում ռուսական հեքիաթների հերոսներին: Դպրոցում ականատես եղանք ռուս բանահյուսության նմուշներին, Կարմիր գլխարկին, Մաշային, արջին, որը նրա պատրաստած կարկանդակներն էր հասցնում տատիկ-պապիկին: Մաշայի կերպարը մարմնավորած 7-րդ դասարանի աշակերտուհու ռուսերենի ու դերասանական վարպետությանը կարելի է միայն նախանձել: Դպրոցն ունի նաեւ աշակերտական երգչախումբ, որը ներկայացրեց մի շարք հայտնի ռուսական ազգային, հայրենասիրական, ինչպես նաեւ համաշխարհային պատերազմի թեմայով երգեր: Հատկապես այս վերջին երգերը առավելապես շեշտում են հայ եւ ռուս ժողովուրդների համատեղ պայքարը, ավելորդ չէ նշել, որ երեխաներն այդ երգերը կատարում էին առավել ոգեւորությամբ:

«Ինքներդ տեսաք մեր դպրոցում ռուսերենի մակարդակը, մեր ուսուցիչների պատրաստվածությունը: Նմանօրինակ միջոցառումներ մեր դպրոցում կազմակերպվում են պարբերաբար, եւ երեխաները մեծ սիրով են ընկալում եւ կատարում ռուսերեն երգերն ու կերպարները», մեր զրույցում նշեց Մեծամորի դպրոցի տնօրեն Արեգնազ Առաքելյանը:

Որ Մեծամորի դպրոցում սիրում են ռուսերենը նկատելի էր նաեւ դահլիճից, երբ երեխաները, որոնք չէին մասնակցում միջոցառմանը, այլ միայն հանդիսատես էին, պակաս ակտիվություն չէին ցուցաբերում սիրված ռուսերեն երգերը կատարելիս:

## Նորավանի «օազիսը»

Հենց այս բնորոշումը կարելի է տալ Նորավանի միակ դպրոցին, որի շուրջբոլորը ամայի տարածություններ են: Գյուղը երբեք չի ունեցել դպրոց, եւ միայն վերջերս երկհարկանի հրաշալի շինությունը նվիրվել է համայնքին: Դպրոցի կոլեկտիվը երիտասարդ տնօրեն **Հովհաննես Ստեփանյանի** ղեկավարությամբ հորս ջանք չի խնայում կրթահամալիրի պահպանման, աշակերտների դաստիարակության եւ կրթության բարձր որակ ապահովելու առումով: Դպրոցն ունի ազգային-պատմական թանգարան, որտեղ գտնվող հին կարասներն ու Մեծ Հայքի բոլոր նահանգների ազգաբնակչության տարազները պարզապես հիացնում էին: Գրեթե բոլոր պատերը «խոսում եւ խրատում էին», ստեղծված են անկյուններ` ռուսական, եվրոպական, ազգային թեմաներով: Ընդամենը մեկ տարվա պատմություն ունեցող դպրոցն իրոք իննին արդեն թանգարան էր, ընդ որում` կոլեկտիվը ամեն ինչ ստեղծել է, ինչպես իրենք նկատեցին, «դասարկ պատերից» եւ սեփական ուժերով:

Նորավանցիները ներկայացրին հասված Պուշկինի «Եվգենի Օնեգին»-ից եւ իհարկե երգեր` «Կատյուշա»-ից մինչեւ հայկական դուդուկի հրաշալի կատարում:

Ընդ որում` Նորավանում միջոցառումն սկսվեց Ռուսաստանի եւ Հայաստանի պետական հիմներով, երկու երկրների դրոշների պարզեցմամբ` եւս մեկ անգամ շեշտելով հայ-ռուսական բարեկամությունը` «երգով կամրջված»: Հատուկ միջոցառման կերպարների համար կոլեկտիվը հայթայթել էր յուրահատուկ զգեստներ, ամբողջ դահլիճում նկատվում էր ռուսական կոլորիտը` ինքնաեռ, բլիթներ եւ այլն:

Ում դրոշն ես նկարում` հարցնում եմ փոքրիկ Արմանին, որը դպրոցի բակում` իր այլ հասակակիցների հետ կավիճով նկարում էր. «Ռուսաստանի», պատասխանեց նա հավելելով` «Ես սիրում եմ Ռուսաստանի դրոշը, սիրուն է»:

Այլ երեխաներ մեր զրույցում նշեցին, որ ռուսաց լեզվի նկատմամբ իրենց սերը պայմանավորված է լեզվի ուսուցիչների գործոնով: Նորավանի դպրոցի ռուսերենի երկու ուսուցչուհիները իրենց բարեկրթությամբ եւ երեխաների նկատմամբ հոգատարությամբ իրոք հաճելի տպավորություն թողեցին:

## Հաղթանակի երգը` գերմանական թեքումով դպրոցում

Սարդարապատի` Զորավար Անդրանիկի անվան դպրոցը գերմանական թեքումով է, այս օրերին դպրոցն ունի նույնիսկ հյուրեր Գերմանիայից, գերմաներենը նույնպես բարձր մակարդակով է դասավանդվում այս դպրոցում, ստեղծվել է նույնիսկ Գերմանիայի անկյուն` լուսանկարներով, տարբեր ցուցանակներով: Դպրոցի ընդօրինակելի թանգարանում Անդրանիկ Զորավարն ունի իր անկյունը, այնտեղ պահպանված են դպրոցի բոլոր տնօրենների անձնական գործերը, նույնիսկ ուսուցիչներից մեկի` 1945-ին գրած շարադրությունը:

Դպրոցի տնօրեն տիկին **Մանուկյանի** խոսքերով` այս ամենը չի խանգարում իրենց բարձր մակարդակ ապահովել նաեւ ռուսերենի ուսուցման գործընթացում: Այստեղ նույնպես գործում է աշակերտների երգչախումբը` «Հայրենասիրուհիներ», որոնց ռուսերեն լեզվով կատարումները պարզապես հիացրին: Սարդարապատի դպրոցի կազմակերպած միջոցառումը առավելապես երաժշտական էր. հատկանշական է, որ գերմանական թեքումով դպրոցում աշակերտական երգչախումբը բարձր մակարդակով կատարեց «Հաղթանակի օրը» հայտնի երգը` կարծես շեշտելով, որ երգը բարեկամության կամուրջ է` եւ ոչ միայն հայ-ռուսական:

## Մեկ օրը նույնիսկ բավական է հրաշալի ռուսերեն երգելու համար

Արմավիրի 5-րդ դպրոցը ընդամենը մեկ օրում էր նախապատրաստվել միջոցառմանը, սակայն դա չխանգարեց Արմավիրի մարզի ամենամեծ դպրոցին` ներկայացնել բարձր մակարդակի ռուսերեն: Անշուշտ, զգալ տալիս էր միջոցառմանը քիչ ժամանակով նախապատրաստված լինելը, սակայն անհնար էր նաեւ չնկատել, որ այս դպրոցում նույնպես ռուսերեն լեզվի ուսուցանումը բարձր մակարդակի է. դպրոցը տարիներ շարունակ եղել է ռուսական թեքումով, այժմ էլ ունի ռուսերեն բաժնի ուսմասվար, ռուսական երգի կատարման աշակերտական երգչախումբ` հրաշալի մեներգիչներով:

Արմավիրի մարզում ռուսական երգի փառատոնը ստացվեց: Այն եւս մեկ անգամ ապացուցեց, որ ռուսերենին, առավել եւս ռուսերեն երգին հայ մարդը վերաբերվում է ոչ իբրեւ օտարի: Երբ ընդամենը մեկ օրում հայ աշակերտը կարող է փայլուն երգել «Կատյուշա» կամ «Երգ զինվորի մասին» ռուսերեն երգերը, ապա դա միայն ընդգծում է, որ ռուսերենը Հայաստանում անտեսված ու մոռացված չէ, լրիվ հակառակը` սիրելի ու հարազատ է:

**ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ**
**Արմավիրի մարզ-Երեւան**

# Սուրբ Թարգմանչաց տոնին 9 ձեռագիր նվիրաբերվեց Մատենադարանին

Սուրբ Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի ձեռքով գրված Ավետարաններից ընդօրինակված ձեռագրերը տարին բուն ցուցադրվում են Մաշտոցի անվան Մատենադարանի գլխավոր ցուցասրահում եւ միայն Սուրբ Թարգմանչաց տոնին են տեղափոխվում երկրորդ ցուցասրահ ու դրվում կողք կողքի` իբրեւ հայ թարգմանական արվեստի փառահեղ վկայություններ:

Տոնն այս տարի առիթ դարձավ նույն սրահում ցուցադրելու նաեւ Ամստերդամում 1660 թվականից ի վեր տպագրված հայերեն հնատիպ գրքերից քսանը` Աստվածաշունչը, Շարականը, Գիրք սաղմոսացը, Մովսես Խորենացու «Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան», Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» ստեղծագործությունները, Շրեոդերի «Արամեան լեզուին գանձ» գրաբարի ձեռնարկը` լատիներենով, հայատառ առաջին քարտեզը` «Համատարած աշխարհացույցը» եւ այլն: Ցուցադրությունը կրում է «Սուրբ Էջմիածնի լույսը Ամստերդամի հայոց տպարանից» խորագիրը, որի ներքո Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում անցկացվեց (հոկտեմբերի 7-9) Ամստերդամի հայոց տպարանի 350-ամյակին նվիրված եռօրյա գիտաժողով, որը եւ եզրափակվեց Մատենադարանում բացված նույնանուն ցուցահանդեսով:

«Այս գրքերը պահվում են աշխարհի տարբեր գրադարաններում, եւ դրանց մասին շատ քիչ է գրվում: Հայոց տպագրության հիմնադրման 500-ամյակին ընդառաջ բացված այս ցուցահանդեսի նպատակն է դրանք դուրս բերել գրադարաններից, ցույց տալ մարդկանց, վերստին արժեւորել ու հիշել բոլոր հայ տպագրիչներին` անուն առ անուն», ասաց Հովան-



դիայում հայ հոգեւոր հովիվ Տեր Տաթեւ վարդապետ Հակոբյանը:

Ցուցահանդեսի բացմանը նախորդեց նշանակալի իրադարձություն` եգիպտահայ **Սուրեն Բայրամյանը** Մատենադարանին նվիրաբերեց 9 ձեռագիր, որոնցից մեկը բացառիկ է այն առումով, որ պարունակում է լեհահայոց համայնքի արտագաղթի վերաբերյալ կարեւոր մանրամասներ:

«Ամեն անգամ հայրենիք այցելելիս ինձ հետ բերում եմ տարբեր տարիներին ձեռք բերած ձեռագրեր ու հնատիպ գրքեր` հանձնելու Մատենադարանին, Ազգային գրադարանին, Ազգային արխիվին, Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի գրադարանին: Մատենադարանին նվիրած այս ձեռագրերը վերջին 50 տարիների ընթացքում Կահիրեից արտագաղթած հայ ընտանիքներից գնված հավաքածուից են: Այդ մասունքները ձեռք եմ բերում հնավաճառներից եւ ամեն այցիս ժամանակ որոշակի քանակություն բերում եմ Հայաստան: Այս անգամ բերած ձեռագրերի հիմնական մասը երաժշտական են, բացառությամբ 25-էջանոց մի ձեռագրի, որն առնչվում է 1600-ականներին Լեհաստանից ծայր առած հայերի արտագաղթին», ասաց Բայրամյանը:

Մատենադարանին միանգամից ինը ձեռագիրը նվիրաբերելը այն հազվադեպ իրողություններից է, որ սովորական օրը վերածում է տոնի. «Մատենադարանի գլխավոր գործառույթը նոր ձեռագրեր ձեռք բերելն է, դրանք պահպանելն ու գիտական շրջանառության մեջ դնելը: Ձեռագրերի հոսքը Մատենադարան ավելացել է. այս տարի արդեն ձեռք ենք բերել 80 ձեռագիր եւ առաջիկա ամիսներին սպասում ենք նոր նվիրատվությունների», ասաց Մատենադարանի տնօրեն **Հրաչյա Թամրազյանը**:

Սուրեն Բայրամյանը մասնագիտությամբ ատամնաբույժ է, սակայն հայ գրի եւ գրականության ու նաեւ մամուլի հանդեպ սերը նրան ստիպել է հիմնական աշխատանքից զատ զբաղվել դրանցով ու դառնալ «Յուսաբեր» օրաթերթի խմբագիրը, եգիպտահայ գաղութում ծավալել մշակութային բարեսիրական գործունեություն, 1975-ից ի վեր լինել Կահիրեի թեմական ազգային խորհրդի անդամ` իբրեւ ատենադպիր:

Եգիպտահայ մամուլին նվիրած երկար տարիները 2005-ին ծնունդ են տվել «Հայ մամուլը Եգիպտոսում» գրքին, որն ընդգրկում է Եգիպտոսում 1865-2005 թթ. լույս տեսած 169 անուն թերթերի մատենագիտական տվյալները: Հիմա աշխատում է «Հայ գիրքը Եգիպտոսում» գրքի վրա, որը ներառում է 1888-ից առ այսօր հայատառ գիրք տպող 40 տպարաններում լույս տեսած ավելի քան 1200 գրքերի վերաբերյալ տեղեկություններ:

«Պիտի ջանամ այս գիրքն ավարտել երկու տարի հետո, որպեսզի հայկական տպագրության հիմնադրման 500-ամյակին իմ ներդրումը բերեմ հայ մշակույթին», ասաց Բայրամյանը:

Մատենադարանին նվիրաբերած մեծարժեք ձեռագրերի եւ եգիպտահայ մամուլի բնագավառում ունեցած մեծ վաստակի համար եգիպտահայ մտավորականը Հրաչյա Թամրազյանից ստացավ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալը, խոստանալով, որ մոտ ապագայում իր կողմից կլինեն նոր նվիրատվություններ:

**ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**






ԱԶԳ Մարզական

ՍԱՄԲՈ

# Մեդալների հարուստ ավարով

Թբիլիսիում անցկացված սամբոյի պատանիների, երիտասարդների եւ աղջիկների աշխարհի առաջնությունից մեդալների հարուստ ավարով տուն վերադարձան հայ սամբիստները՝ նվաճելով 6 մեդալ: Առաջնությանը մասնակցում էին ավելի քան 30 երկրի շուրջ 600 սամբիստներ:

Հայ սամբիստներից բոլորից հաջողը 48 կգ քաշային Գրիգոր Մխիթարյանի ելույթն էր: Նա հաղթեց իր բոլոր մրցակիցներին ու հռչակվեց աշխարհի չեմպիոն: Ալբերտ Քարհանյանը (74 կգ) եւ Ռուդոլֆ Ոսկանյանը (87 կգ) արժանացան արծաթե մեդալի, իսկ Գոռ Մալյանը (52 կգ), Միեր Կարապետյանն (75 կգ) ու Գարեգին Խաչատրյանը (90 կգ) դարձան բրոնզե մրցանակակիրներ:

Հիշեցնենք, որ գարնանը Հունաստանի Սալոնիկ քաղաքում տեղի ունեցած Եվրոպայի պատանիների եւ երիտասարդների առաջնությունում հայ սամբիստները նվաճել էին 1 ոսկե, 1 արծաթե եւ 5 բրոնզե մեդալ: Շուտով մրցապատրաստ դուրս կգան նաեւ մեծահասակները, որոնք Տաջիկստանում նոյեմբերի 4-8-ը կվիճարկեն աշխարհի առաջնության պարգեւները:

# Ժամանակն է ՀՀ հավաքականի առջեւ լուրջ խնդիր դնելու

*Վարդան Մինասյանի կարծիքով Անդորրայի հետ ավելի դժվար է լինելու*


ՖՈՏՈԼՈՒՐ

***Այսօր ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականն ընթացիկ մրցաշրջանում իր վերջին հանդիպումը կանցկացնի՝ Երեւանում հյուրընկալելով 2-րդ խմբի բացահայտ հետնապահ Անդորրայի ընտրանուն, որն անցկացրած երեք հանդիպումներում էլ պարտվել է (Ռուսաստան՝ 0-2, Իռլանդիա՝ 1-3, Մակեդոնիա՝ 0-2): Սլովակների նկատմամբ տոնած վստահ հաղթանակից հետո հայ ֆուտբոլասերներն այսօրվա խաղում մեր հավաքականից միայն հաղթանակ են ակնկալում, նույնիսկ՝ խոշոր հաշվով: Ինչ խոսք, ոգեւորությունը մեծ է եւ կարող է նույնիսկ այնպես ստացվել, որ 4-րդ տուրից հետո Հայաստանի հավաքականը գլխավորի ընտրական 2-րդ խմբի աղյուսակը:***

Ճիշտ է, հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանն այսօրվա խաղում հեշտ հաղթանակ չի ակնկալում: Խաղի նախօրեին կայացած մամուլի ասուլիսում նա նշեց, որ անդորրացիների հետ մրցավեճում մեր ֆուտբոլիստները պետք է ավելի կենտրոնացված հանդես գան, քանի որ մրցակիցը կազմակերպված է խաղում պաշտպանությունում, իսկ զանգվածային պաշտպանությունը ճեղքելն այնքան էլ դյուրին չէ: Որպես ապացույց նա նշեց, որ մակեդոնացիները 2 գոլերն էլ Անդորրային խփել են ստանդարտ դրությունից, Իռլանդիան եւս մեկ գոլը խփել է այդպիսի իրավիճակից:

Վարդան Մինասյանը ֆուտբոլիստներին խորհուրդ է տվել քիչ ուշադրություն դարձնել լրատվամիջոցների արձագանքներին եւ լրջորեն մոտենալ հետնապահի հետ հանդիպմանը, քանի որ մրցակցին թերագնահատելը հղի է վտանգներով: Մարզիչը նաեւ զգուշացրել է իր սաներին մրցակցի սադրանքների զոհը չդառնալ ու դեղին քարտեր չստանալ: Դա հատկապես վերաբերում է Յուրա Մովսիսյանին, որը Մակեդոնիայում նման սադրանքի զոհ դարձավ եւ արդեն մեկ դեղին քարտ ունի:

Քանի որ Կառլեն Մկրտչյանը 2-րդ դեղին քարտն է ստացել, նրա փոխարեն այսօրվա խաղում հանդես կգա Արթուր Եդիգարյանը: Էդգար Մալաքյանը 90 տոկոսով է պատրաստ հանդիպմանը, իսկ Դավիթ Մանոյանն այս խաղում էլ չի կարող օգնել խաղընկերներին: Ըստ գլխավոր մարզչի, անդորրացիների հետ խաղում հաղթողի գլխավոր հավակնորդ համարվելը մի տեսակ ճնշում է իրենց, քանի որ բոլորն այդ խաղում հավաքականից հաղթանակ են պահանջում: Նա գտնում է, որ խփած արագ գոլը հնարավորություն կտա մեր ֆուտբոլիստներին ձերբազատվել ավելորդ ճնշումից ու հուզմունքից, ավելի անկաշկանդ գործել:

Սլովակիայի հավաքականի նկատմամբ տարած հաղթանակից հետո էլ Վարդան Մինասյանը գտնում է, որ այս մրցափուլում կարեւորը խաղի կայունացումն է, առաջընթացի պահպանումը: Սակայն կարծում ենք, որ ժամանակն է արդեն այս մրցափուլում Հայաստանի հավաքականի առջեւ խնդիր դնել պայքարելու եզրափակիչ փուլի ուղեգրի համար: Անցկացված խաղերը ցույց տվեցին, որ մեր ֆուտբոլիստները մեծ ներուժ ունեն եւ կարող են լուրջ պայքար մղել: Իսկ եթե նույնիսկ դրված խնդիրը չկատարվի, կարծում ենք ոչ ոք չի մեղադրի ոչ ֆուտբոլիստներին, ոչ էլ գլխավոր մարզչին:

Վարդան Մինասյանը տեղեկացրեց, որ եթե Ռոբերտ Արզումանյանին չհաջողվի ձմռանը նոր թիմ գտնել, ապա սիրով նրան կհրավիրեն իր հարազատ «Փյունիկ»: Ներկայումս «Փյունիկում» է մարզվում Հայաստանի երիտասարդական հավաքականի խաղացող Լեւոն Հայրապետյանը, որի հետ դեռեւս պայմանագիր չի կնքվել:

Խոսելով առաջիկա ծրագրերի մասին, գլխավոր մարզիչը նշեց, որ շատ է ցանկանում նոյեմբերին ընկերական խաղ անցկացնել: Նախատեսվում էր Սիրիայի հավաքականի հետ, սակայն չստացվեց: Իսկ ձմռանը մեր հավաքականը հավանաբար մասնակցի Կիպրոսի կամ Մալթայի միջազգային մրցաշարին:

# Յուրի Վարդանյանն ավտովթարի է ենթարկվել

Armsport.am-ը հղում անելով «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնին, տեղեկացնում է, որ հոկտեմբերի 8-ին ժամը 21-ի սահմաններում Երեւան-Գյումրի ավտոճանապարհի 20 կմ-ի հատվածում Յուրի Վարդանյանն իր «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայով բախվել է «ԽԼԿ-6 Խ701» մակնիշի տրակտորին ու տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով նախ տեղափոխվել է Աշտարակի, այնուհետեւ Երեւանի հիվանդանոց:

Արագ ապաքինում եւ առողջություն ենք մաղթում անվանի նախկին ծանրորդին, որը ներկայումս ՀՀ նախագահի խորհրդականն է:

# Առաջատար երկյակը փոխվեց

Ջերմուկում ընթացող շախմատի Կարեն Ասրյանի հուշամրցաշարի 6-րդ տուրից հետո 5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Տիգրան Քոթանջյանն ու Դավիթ Պետրոսյանը: Վերջին 3 տուրերում Քոթանջյանը 2,5 միավոր վաստակեց: Նա հաջորդաբար հաղթեց Գրիգոր Դիլանյանին եւ Սերգեյ Վոլկովին, իսկ 6-րդ տուրում ոչ-ոքի խաղաց Կոնստանտին Շանավայի հետ: Իսկ ահա Դավիթ Պետրոսյանը 3 անընդմեջ հաղթանակ տոնեց՝ հաջորդաբար պարտության մատնելով Վարդան Խոջայանին, Սոպիո Գվետաձեին եւ Ռոբերտ Հովհաննիսյանին:

5 շախմատիստներ՝ Կոնստանտին Շանավան, Նիկիտա Մատինյանը, Զավեն Անդրեասյանը, Սամվել Տեր-Սահակյանն ու Հրայր Սիմոնյանը վաստակել են 4,5-ական միավոր:

# Առաջատարը Կրամնիկն է

Բիլբաոյում մեկնարկել է շախմատի «Մեծ սաղավարտ» մրցանակի եզրափակիչ փուլը Մագնուս Կառլսենի (2826), Վիշվանաթան Անանդի (2800), Վլադիմիր Կրամնիկի (2780) եւ Ալեքսեյ Շիրովի (2749) մասնակցությամբ: Մրցաշարը ՖԻԴԵ-ի 22-րդ կարգի է, միջին վարկանիշը 2789 է: Մրցաշարի մրցակարգը տարբերվում է սովորական մրցամարտերից: Այստեղ հաղթանակի համար շախմատիստին 3 միավոր է տրվում, ոչ-ոքին գնահատվում է 1 միավոր:

«Մեծ սաղավարտի» առաջին եզրափակիչը կայացել է 2008-ին, որում խաղում էին Վեսելին Թոփալովը, Լեւոն Արոնյանը, Վիշվանաթան Անանդը, Մագնուս Կառլսենը, Վասիլի Իվանչուկն ու Թեյմուր Ռաջաբովը: Հաջողությունն ուղեկցեց Թոփալովին: Անցյալ տարի հաղթեց Լեւոն Արոնյանն՝ առավելության հասնելով Ալեքսանդր Գրիշչուկի, Սերգեյ Կարյակինի եւ Ալեքսեյ Շիրովի նկատմամբ: Այս տարի Արոնյանին Շանհայում կայացած մրցաշարում չհաջողվեց Բիլբաոյի ուղեգիր նվաճել: Ուղեգրերը բաժին հասան Շիրովին եւ Կրամնիկին:

Մեկնարկում Կրամնիկը սպիտակներով պարտության մատնեց Կառլսենին, իսկ Շիրովն ու Անանդը հաշտություն կնքեցին: 2-րդ տուրը բավական արդյունավետ էր: Կրամնիկը հաղթեց Շիրովին, Անանդն առավելության հասավ Կառլսենի նկատմամբ:

2 տուրից հետո 6 միավորով առաջատարը Կրամնիկն է: Անանդն ունի 4 միավոր, Շիրովը՝ 1: Մրցաշարն անհաջող է սկսել Կառլսենը, որն առայժմ միավոր չի վաստակել:

# Թուրքերն ու ադրբեջանցիները ջախջախիչ պարտություններ կրեցին



Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի 3-րդ տուրի հանդիպումներից հետո միայն չորս հավաքականների՝ Հոլանդիայի, Չեռնոգորիայի, Գերմանիայի եւ Նորվեգիայի է հաջողվել երեքական հաղթանակ տոնել: Առանց միավորի կորստի են ընթանում նաեւ Ավստրիայի, Շվեդիայի, Անգլիայի եւ Իսպանիայի հավաքականները, որոնք շահել են անցկացրած 2 հանդիպումներն էլ:

Սլովակների նկատմամբ ՀՀ հավաքականի հաղթանակը մեծ նվեր էր ոչ միայն հայ ֆուտբոլասերներին, այլեւ Ռուսաստանի ընտրանուն, որը Դուբլինում 3-2 հաշվով պարտության մատնեց իռլանդացիներին: Ընդ որում ռուսները մինչեւ 72-րդ րոպեն Կերժակովի, Ձագոեւի եւ Շիրոկովի խփած գոլերի շնորհիվ խաղը շահում էին 3-0 հաշվով: Սակայն նախ Ռոբի Քինն իրացրեց 11 մ հարվածը, ապա Լոնգը հաշվի տարբերությունը հասցրեց նվազագույնի: Այդ հաղթանակի շնորհիվ ռուսները բարելավեցին մրցաշարային իրավիճակը:

Հայերի պես, մակեդոնացիներն էլ անդրանիկ հաղթանակը տոնեցին՝ հյուրընկալվելիս 2-0 հաշվով առավելության հասնելով Անդորրայի հավաքականի նկատմամբ: Հաղթանակն ապահովեցին Նաումոսկու եւ Շիկովի խփած գոլերը: Ընդհանրապես ընտրական B խմբում բացի անդորրացիներից, մյուս 5 հավաքականներն այս պահին իրական հնարավորություն ունեն պայքարելու ուղեգրերի համար:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Գերմանիայում թուրքերի հետ կայանալիք հանդիպումը: Աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիրները 3-0 հաշվով ջախջախեցին Գուս Հիդինգի գլխավորած հավաքականին: Հանդիպման հերոսը Միրոսլավ Կլոզեն էր, որը 2 գոլ խփեց: Մեկ գնդակ էլ իր օգտին գրանցեց Օզիլը:

A խմբի մյուս խաղերում ավստրիացիները 3-0 հաշվով հաղթեցին ադրբեջանցիներին, իսկ բելգիացիները 2 անպատասխան գնդակ խփեցին ղազախներին Աստանայում կայացած մրցավեճում:

C խմբի առաջատար իտալացիներին չհաջողվեց 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնել՝ հյուրընկալվելիս ոչ-ոքի (0-0) ավարտելով հանդիպումը հյուսիսիռլանդացիների հետ: Տուրի ամենամեծ անակնկալը մատուցեցին էստոնացիները՝ Բելգրադում 3-1 հաշվով առավելության հասնելով սերբերի նկատմամբ: Ընդ որում հաշիվը 60-րդ րոպեին բացել էին դաշտի տերերը Ժիգիչի հարվածի շնորհիվ: Էստոնացիները 6 միավորով 2-րդ տեղում են: 4 միավոր ունեն սերբերը, սլովենացիներն ու հյուսիսիռլանդացիները: Սլովենիայի հավաքականը 5-1 հաշվով հաղթեց Ֆարերներին: Հեթ-տրիկի հեղինակ դարձավ Մատավժը:

Տուրի ամենախոշոր հաշիվը գրանցվեց E խմբում կայացած Հունգարիա-Սան Մարինո խաղում: Հունգարացիները 8 անպատասխան գնդակ խփեցին մրցակցի դարպասը: Արդյունավետությամբ աչքի ընկավ Շալայը՝ խփելով 3 գնդակ: 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Հոլանդիայի ընտրանին: Քիշնեւում մոլդովացիների նկատմամբ հաղթանակն ապահովեց Հունտելարի խփած միակ գոլը:

D խմբում հաջող է հանդես գալիս Ֆրանսիայի հավաքականը: Լորան Բլանի սաները 2-րդ հաղթանակը տոնեցին՝ 2-0 հաշվով պարտության մատնելով ռումինացիներին: Ալբանիա-Բոսնիա խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1: Լյուքսեմբուրգ-Բելառուս խաղում դարպասները մնացին անառիկ:

F խմբում 7 միավորով առաջատարը խորվաթներն են, որոնք արտագնա խաղում 2-1 հաշվով հաղթեցին Իսրայելի հավաքականին: Աչքի ընկավ Կրանչարը՝ խփելով 2 գոլ: Հույները 1-0 հաշվով պարտության մատնեցին լատվիացիներին, իսկ վրացիները միայն ավելացված ժամանակում Սիրաձեի խփած միակ գոլի շնորհիվ կարողացան կոտրել Մալթայի հավաքականի դիմադրությունը:

G խմբում անսպասելիորեն հաջող է խաղում Չեռնոգորիայի հավաքականը, որը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնելով շվեյցարացիների նկատմամբ (1-0), վստահորեն գլխավորեց աղյուսակը: Բուլղարացիներն էլ միակ գոլի շնորհիվ հաղթեցին Ուելսին:

H խմբում 3-րդ հաղթանակը տոնեցին նորվեգացիները, որոնք 2-1 հաշվով առավելության հասան Կիպրոսի հավաքականի նկատմամբ: Պորտուգալիայի հավաքականն առաջին հաղթանակը տոնեց՝ 3-1 հաշվով հաղթելով դանիացիներին: Գոլերից վերջինը խփեց Քրիստիանու Ռոնալդուն:

I խմբում աշխարհի չեմպիոն Իսպանիայի ընտրանին 2-րդ անընդմեջ հաղթանակը տարավ՝ 3-1 հաշվով պարտության մատնելով լիտվացիներին: Չեխերն էլ 1-0 հաշվով հաղթեցին շոտլանդացիներին:

Մրցաշարային աղյուսակ
B խումբ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Իռլանդիա | 3 | 2 | 0 | 1 | 6-4 | 6 |
| 2. Ռուսաստան | 3 | 2 | 0 | 1 | 5-3 | 6 |
| 3. Սլովակիա | 3 | 2 | 0 | 1 | 3-3 | 6 |
| 4. Հայաստան | 3 | 1 | 1 | 1 | 5-4 | 4 |
| 5. Մակեդոնիա | 3 | 1 | 1 | 1 | 4-3 | 4 |
| 6. Անդորրա | 3 | 0 | 0 | 3 | 1-7 | 0 |

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Վերակառուցված ժամանակակից հիվանդանոց Նոյեմբերյանում



8 հարյուր գրամանոց փոքրիկը, որը ծնվել է մեկ ամիս առաջ, եւ որից հրաժարվել է հարազատ մայրը, այժմ Նոյեմբերյանի հիվանդանոցի ծննդատան բաժանմունքում է, որտեղ պայմանները պարզապես աղետալի են: Ցածր ջերմաստիճան, կիսավեր լվացարաններ, հիգիենիկ, մեղմ ասած, վատ իրավիճակ: Բժիշկները ամեն ինչ անում են փոքրիկ աղջնակի քաշը նորմայի բերելու, նրա կյանքը փրկելու համար, որը, ցավոք, հիվանդանոցի ներկա պայմաններում պարզապես հրաշք է թվում:

Հենց այս իրավիճակում է Նոյեմբերյանի հիվանդանոցն այսօր, սակայն հոկտեմբերի 10-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի նվիրատուների շնորհիվ, ՀՀ կառավարության աջակցությամբ հիվանդանոցը ստացավ նոր, վերակառուցված շենք, իսկ, ինչպես վստահեցրեց առողջապահության նախարար **Հարություն Քուշկյանը**. «Շուտով հիվանդանոցը կստանա նաեւ ժամանակակից բժշկական սարքավորումներ, որոնց մի մասն արդեն իսկ Հայաստանում է, իսկ մյուս մասը Հայաստան կուղարկի Գերմանիայի հայ բժիշկների միությունը»:

Նոյեմբերյանի հիվանդանոցի վերակառուցման ծրագիրը հնարավոր է դարձել Շվեյցարիայի, Գերմանիայի, Ավստրալիայի եւ Լիբանանի հայ համայնքների նվիրատվությունների շնորհիվ: Լիբանանի վարչապետ Սաադ Հարիրին անձամբ 100 հազար դոլարի նվիրատվություն է արել. «Առհասարակ Հայաստանին օգնելու ավանդույթը Լիբանանում դեռեւս նախկին վարչապետ, այժմյան վարչապետի հայր Ռաֆիկ Հարիրիի օրերից է մնացել: 1988-ի երկրաշարժի ժամանակ նա անձամբ 500 հազար դոլար նվիրաբերեց երկրաշարժից տուժածներին: Իսկ այժմ, երբ վարչապետ Սաադ Հարիրին լսեց հայկական այս ձեռնարկի մասին, անմիջապես ցանկություն հայտնեց օգնելու», ասաց Լիբանանի վարչապետի խորհրդական, նրա անձնական ներկայացուցիչ **Արա Սիսեռյանը**:

Նոյեմբերյանի վերակառուցված հիվանդանոցը, որը եռահարկ շինություն է, բացառիկ կարեւորություն ունի մարզի համար: Այն քաղաքի եւ շրջակա գյուղերի միակ առողջապահական հաստատությունն է, որը կարող է սպասարկել ավելի քան 30 հազար բնակչի: Հիվանդանոցը կունենա պոլիկլինիկա` ֆիզիոթերապեւտիկ սրահով, ատամնաբուժարան, թերապեւտիկ, վերակենդանացման, վիրաբուժական, մանկաբարձական, գինեկոլոգիայի, ինֆեկցիոն եւ ախտորոշիչ բաժանմունքներ եւ ընդհանուր առմամբ 30 հիվանդասենյակ: Բոլոր 30 սենյակներն ունեն սանհանգույցներ` ապահովված տաք եւ սառը ջրով: Շենքի ջեռուցումը կապահովվի նորակառույց կաթսայատան միջոցով: Կառուցվել է նաեւ վերելակ, որը Նոյեմբերյանում գործող միակ վերելակն է: Բարեկարգված է նաեւ հիվանդանոցի շրջակայքը: Նվիրատուներից «Հայաստան» համահայկական հիմնադրամի Շվեյցարիայի տեղական մարմնի ատենապետ **Ժիլբեր Մոմջյանը** նշեց. «Շատ կարեւոր է, որ մենք Շվեյցարիա-Լիբանան-Գերմանիա-Ավստրալիա համատեղ ջանքերով կարողացանք ստեղծել այս հիվանդանոցը: Շատ ենք ուզում, որ այն ծառայի հատկապես որպես ծննդատուն, որ այստեղ ծնվեն մեր զավակները, մեր ապագա արծիվները»: Ի դեպ, մինչեւ այժմ Նոյեմբերյանի հիվանդանոցը տարեկան ընդունել է շուրջ 400 ծնունդ, իսկ վերակառուցումից հետո կոլեկտիվն ակնկալում է, որ ծնունդների թիվը կավելանա եւս 80-ով: Բժիշկները ծնելիության ցածր մակարդակի պատճառներից մեկը համարում են նաեւ այսօր գործող ծննդատան ոչ բարվոք վիճակը:

ՀՀ կառավարության պատվիրակության անդամ, փոխվարչապետ **Արմեն Գեւորգյանը** նույնիսկ հետաքրքրվեց բժիշկներից, թե որքա՞ն է կազմում բժիշկ-գինեկոլոգի ամսական աշխատավարձը. «300 հազար դրամ», նշեց բժիշկներից մեկը: Գեւորգյանը` դիմելով Քուշկյանին, նշեց. «Դե, եթե հաշվի առնենք, որ մեր աշխատավարձը 300 հազարից քիչ է, կարելի է այսուհետեւ գինեկոլոգ աշխատել»:

Արմեն Գեւորգյանը նաեւ նշեց, որ նմանատիպ ծրագիր կառավարությունը կիրականացնի նաեւ մարզի մեկ այլ բնակավայրում` Բերդում, ինչպես նաեւ Սյունիքի մարզում: Առողջապահության նախարարն իր խոսքում ընդգծեց, որ հիվանդանոցի շինարարությունն իրականացնելիս հաշվի են առնվել նաեւ բժշկական նրբությունները. «Շատ շուտով կունենաք գերժամանակակից ռենտգեն համակարգ»: «Հայաստան» համամահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն **Արա Վարդանյանը** նույնպես երաշխավորեց, որ հիվանդանոցին սարքավորումներ տրամադրելը առանձին ծրագիր, որն իր վրա է վերցրել հիմնադրամը: Տավուշի մարզպետ **Արմեն Ղուլարյանն** էլ, շնորհակալություն հայտնելով հիմնադրամին, նվիրատուներին եւ բոլոր շինարարներին, ընդգծեց, որ ընդհանուր առմամբ Նոյեմբերյանի վերակառուցված հիվանդանոցը 113 բժշկի կապահովվի աշխատանքով:

## Նասիբյան Կոլյայի որդին` Միքայելը

Հիվանդանոցի բակում միջին տարիքի մի մարդ շարունակ ուղղում էր տեղադրված կիսանդրու առջեւի ծաղկեպսակը: Կիսանդրին գյուղական բժիշկ Կոլյա Նասիբյանինն է, որի անունով էլ կոչվում է Նոյեմբերյանի վերակառուցված հիվանդանոցը, իսկ միջին տարիքի տղամարդը Միքայել Նասիբյանն էր` «բժշկի որդին», ինչպես նրան դիմում են ծանոթները: «Մասնագիտությամբ էլեկտրիկ եմ, սակայն բժշկությունը հեռու չի գնացել մեր ընտանիքից. աղջիկս սովորում է բժշկական համալսարանի երկրորդ կուրսում, հարսս բժշկուհի է, եղբորս որդին նույնպես ապագա բժիշկ է», մեր զրույցում ասած Միքայել Նասիբյանը:

**ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ**
**Նոյեմբերյան-Երեւան**

# Շինարարության նախորդ փուլի թերությունները չե՞ն կրկնվի

**Մուշ-2 թաղամասում շարունակվող շինարարական աշխատանքների ընթացքին եւ որակին հետեւելու նպատակով անցած շաբաթ օրը Գյումրի էին այցելել ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Կարապետյանը, քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանը, նախարարի տեղակալ, ՀՀ գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանը: Շիրակի մարզպետի եւ Գյումրու քաղաքապետի ուղեկցությամբ շինհրապարակ այցելության ընթացքում նախարարը հավաստիացրել է, որ շինարարության այս փուլում որակի հետ կապված խնդիրներն ավելի խիստ են վերահսկվում եւ կառուցման նախորդ փուլում տեղ գտած թերությունները չեն կրկնվի: Մուշ-2 թաղամասում շինարարության երկրորդ փուլով նախատեսվում է կառուցել 1724, Անի թաղամասում` 220 բնակարան:**

**Շրջայցից հետո տեղի ունեցած աշխատանքային խորհրդակցությունում, մարզպետարանի լրատվության բաժնի տեղեկացմամբ, քննարկվել են երկրաշարժից անօթեւան ընտանիքների համար այս տարի թաղամասում շահագործման հանձնված 1056 բնակարանների բնակեցմանն առնչվող խնդիրները, կապված, մասնավորապես, դրանց ջրամատակարարման եւ կոյուղու համակարգերում տեղ գտած թերությունների հետ: Առկա թերություններն ուսումնասիրելու եւ վերացնելու համար ստեղծվել է աշխատանքային խումբ:**

**Առաջիկա ձմռանը խնդիրներ չունենալու համար հանձնարարվել է արագացնել բնակարանների գազաֆիկացման ընթացող աշխատանքները: Քննարկվել են նաեւ տնակներից տարածքների ազատման, թաղամասում համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման հարցեր:**

**Գ. Ս.**

ԾԱՆՈՒՑՈՒՄ

## ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔ

Ամերիկյան դեսպանատունը կազմակերպում է գրասենյակային ու բնակարանային կահույքի, մեքենաների, համակարգիչների եւ այլ ապրանքների աճուրդային վաճառք, որը տեղի կունենա **հոկտեմբերի 23-ին** Ամերիկյան փողոց 1 հասցեում **ժամը 10-19-ը:** Ապրանքները կարող եք զննել տեղում վաճառքին նախորդող ուրբաթ օրը, հոկտեմբերի 22-ին ժամը 10-19-ը: Զննումն անվճար է:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.usa.am էջի հայտարարությունների բաժինը:

Երեւանի Ապրանքա-Հումքային Բորսայի հարթակում իրականացվում է ԱրմենՏել ՓԲԸ-ի կողմից ներկայացված ՀՀ մարզերի` Արեւելյան ՏԿ, Արեւմտյան ՏԿ, Հյուսիսային ՏԿ, Կենտրոն ՏԿ եւ Հարավային ՏԿ-ների շահագործումից հանված գծամալուխային կառույցների բաժանորդային ցանցերի աճուրդային վաճառքը դասական եղանակով:

Աճուրդները կկայանան ս.թ. հոկտեմբերի 13-ին ժամը 11.00-ին եւ այնուհետեւ յուրաքանչյուր աշխ. օր ժ.11.00-17.00-ն, ք. Երեւան Ագաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցեում: Աճուրդներին մասնակցելու կարգին, ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 565228, նամակագրել **info@yercomex.am** կամ այցելել **www.borsa.am**

**Կորել է**

**Արեւհաս Ֆերդինանդի Հարությունյանի** (ծնված 17.02.1977 թ.) ՀՀ անձնագիրը: Համարել անվավեր:

**Կորել է**

**Գարեգին Խաչիկի Ալոյանի** (ծնված 06.06.1975 թ.) ՀՀ անձնագիրը: Համարել անվավեր:

**ՀՐԱՉՅԱ ՂԱՓԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ**

**Հոկտեմբերի 16-ին**
**նոր ներկայացում**

**Խուան Խոսե Ալոնսո Միլիան**

«Ցիանկալիում... Կաթով կամ առանց կաթի» (սեւ հումորով համեմված ֆարս 2 գործողությամբ)

Թարգմանությունը` **Հովհաննես Թեքգյոզյանի**

Բեմադրության հեղինակ` **Գրիգոր Խաչատրյան**

Նկարիչ` ՀՀ վաստակավոր նկարիչ` **Կարեն Գրիգորյան**

Ներկայացումների սկիզբը` ժ. 19-ին:

Տոմսերը վաճառվում են: Հեռախոս` 52-47-23:

Թատրոնի գեղարվեստական ղեկավար

ՀՀ ժողովրդական արտիստ` **ԱՐՄԵՆ ԽԱՆԴԻԿՅԱՆ**

**«ՊԼԱՍՏԻԿ» ԲԲԸ հաշվապահական հաշվեկշիռը առ 31.12.2009 թ. դրությամբ**

*Ձեւ N1* *մեկ հազար դրամ*

| Ա Կ Տ Ի Վ | տող | 31.12.2009 թ. |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 70,202 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 020 | 11,913 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 040 | 200 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 070 | 4,362 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 86,677 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | |
| Նյութեր | 090 | 6031 |
| Արագամաշ առարկաներ | 110 | 228 |
| Արտադրանք | 130 | 3,187 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 5,026 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 5120 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 633 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 2,836 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 23,061 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 109,738 |
| Պ Ա Ս Ի Վ | տող | 31.12.2009 թ. |
| 1 | 2 | 3 |
| III. Սեփական կապիտալ | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 33,885 |
| Կուտակված շահույթ | 270 | (10,628) |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 23,257 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | 64,096 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 64,096 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 370 | 1,064 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 9,210 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | 8,490 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 1,473 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 1,455 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | 693 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 22,385 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 109,738 |

**Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**

*Ձեւ N2* *մեկ հազար դրամ*

| Ցուցանիշի անվանումը | տող | 31.12.2009 թ. |
|---|---|---|
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 189,010 |
| Իրացված ապրանքի, ծառայությունների ինքնարժեք | 020 | (157,809) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 31,201 |
| Իրացման ծախսեր | 040 | (1,183) |
| Վարչական ծախսեր | 050 | (23,269) |
| Ապրանքների, արտադրանքի իրացումից շահույթ (վնաս) | 060 | 6,749 |
| Գործառնական այլ եկամուտներ | 070 | 12,433 |
| Գործառնական այլ ծախսեր | 080 | (10,245) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 8,937 |
| Ֆինանսական ծախսեր | 100 | (403) |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս) | 130 | (8,077) |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 457 |
| Զուտ շահույթ (վնաս) մինչեւ շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 457 |
| Շահութահարկի գծով ծախս | 170 | (2,292) |
| Զուտ շահույթ (վնաս) հարկումից հետո | 180 | (1,835) |

*Հաշվեկշռում ներառված չեն զրոյական տողերը

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 11.10.2010, գինը` 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: